

ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺ
ուսումնագիտական
եւ մանկավարժական հանդէս

Հայոց Լեզուի Ուսուցման Ծրագիր

Նախակրթարանի
Ա.էն Դ. դասարաններուն համար



Հրատարակութիւն
Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի
Դպրոցական Հայագիտութեան Զարգացման Գրասենեակի

«Հայ Մանկավարժ»

ուսումնագիտական եւ մանկավարժական հանդէս
լոյս կը տեսնէ տարին չորս անգամ

*Հայկական կրթական հաստատութիւններու եւ անոնց հովանաւոր
մարմիններու պատասխանատուներուն, հայկական վարժարաններու
ուսուցիչ-ուսուցչուհիներուն, դպրոցական հայագիտութեան խնդիր-
ներով հետաքրքրուած գիտական եւ մտաւորական հանրութեան եւ
ծնողներու համար*

Հրամանով

Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Ամենապատիւ եւ Գերերջանիկ
Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքին

Պատասխանատու Խմբագիր

Հայր Վարդան վրդ. Գազանձեան

Խմբագրական Կազմ

Դոկտ. փրոֆ. Նազիկ Յարութիւնեան (վարիչ երեւանի պետական
համալսարանի մակավարժութեան ամպիոնի)

Դոկտ. փրոֆ. Աշոտ Մելքոնեան (տնօրէն Հայաստանի Գիտութիւններու
ազգային ակադեմիայի պատմութեան կաճառի)

Դոկտ. փրոֆ. Ճուլիէթա Կիլամիրեան (դասախօս Խաչատուր Աբով-
եանի անուան երեւանի պետական մանկավարժական համալսարանի)

Դոկտ. Լիլիթ Արզումանեան (գրաքննադատ)

Տնօրէն

Վարդան Թաշձեան

Հրատարակիչ

Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի

Դպրոցական Հայագիտութեան Զարգացման Գրասենեակ

«Սուրբ Գրիգոր Նարեկացի» Կեդրոն

Հայ Կաթողիկէ Պատրիարքարան


2078-5605 Ժէիթաուի Պէյրութ-Լիբանան

Հեռ.: + 961 1 570559

Հեռատիպ: 961 1 570562

Էլ.հասցէ: nareg@armeniancatholic.org

www.armeniancatholic.org



ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺ

ուսումնագիտական եւ մանկավարժական հանդէս

Հրատարակութիւն
Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի
Դպրոցական Հայագիտութեան Զարգացման
Գրասենեակի

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հայ կաթողիկէ պատրիարքարանի Սուրբ Գրիգոր Նարեկացի կեդրոնի Դպրոցական հայագիտութեան զարգացման գրասենեակը «Հայ մանկավարժ» հանդէսի սոյն համարով կը ներկայացնէ հայոց լեզուի ուսուցման ուղեցոյց-ծրագիր մը, ուղղուած՝ Լիբանանի հայկական վարժարաններու նախակրթարաններու հայոց լեզուի ուսուցիչներուն:

«Հայ մանկավարժ»ի նախորդ համարով ներկայացուցած էինք այլ ուղեցոյց-ծրագիր մը, ուղղուած մայրենի լեզուի մանկապարտէզի դասարաններու ուսուցիչներուն:

Ջոյգ ձեռնարկներուն հեղինակն է Երեւանի Խ. Աբովեանի անուան պետական մանկավարժական համալսարանի փրոֆեսոր, դոկտ. Ճուլիեթա Կիւլամիրեան: Յարգարժան դոկտորը հեղինակ է ատլի քան 300 գիրքերու, գիտամեթոտական յօդուածներու, մեթոտական ձեռնարկներու եւ դասագիրքերու: Ան մայրենի լեզուի ուսուցման շուրջ 10 դասագիրքեր ստեղծած է սփիւռքահայ դպրոցներու համար, ինչպէս նաեւ կատարած է ուսուցիչներու վերապատրաստութեան ծրագիրներ՝ հայկական սփիւռքի բազմաթիւ կեդրոններու մէջ: Ձեռնարկներու կազմութեան գործնականօրէն մասնակից եղան այս նպատակով յառաջացուած Լիբանանի հայ կաթողիկէ վարժարաններու մէջ պաշտօնավարող ուսուցիչներէն բաղկացած աշխատանքային զոյգ խումբերը՝ մանկապարտէզի եւ նախակրթարանի բաժիններով:

Սոյն ձեռնարկներու կազմութեան հիմքը հանդիսացաւ դոկտ. Ճուլիեթա Կիւլամիրեանի կողմէ Լիբանանի Հայ կաթողիկէ վարժարաններուն մէջ կատարուած մանկավարժական վերապատրաստութեան ծրագիրը, որ իրականացաւ երկու հանգրուանով, 2011 թուականին, ընդհանուրը 4 ամսուայ տեւողութեամբ: Ծրագրի ընթացքին, դոկտ. Կիւլամիրեան կատարեց ոչ միայն վերապատրաստական աշխատանքներ, այլեւ ուսումնասիրեց Հայ կաթողիկէ վարժարաններուն մէջ հայոց լեզուի ուսուցման պայմանները: Այդ աշխատանքներուն եւ ուսումնասիրութեան պսակումը հանդիսա-

ցան նշեալ ուղեցոյցները, որոնց կազմութեան մեծապէս նպաստեցին վերապատրաստութեան դասընթացքներուն հետեւած ուսուցիչները. անոնք կատարեցին արժէքաւոր դիտարկումներ եւ առաջարկներ, որոնք օգնեցին, որ ուղեցոյցները առաւել համապատասխան ըլլան առկայ պայմաններուն եւ պահանջներուն. այդ պայմաններուն եւ պահանջներուն մեծ մասը հասարակաց բնոյթ ունին ընդհանրապէս լիբանանահայ վարժարաններուն մէջ:

Ընդհանուր այս ծրագիրը կայացաւ բարձր հովանաւորութեամբ Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Ամենապատիւ Տէր Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքին: Ուսուցիչներու վերապատրաստութեան, ինչպէս նաեւ ուղեցոյցներու պատրաստութեան հետ կապուած աշխատանքները համակարգեց Դպրոցական հայագիտութեան զարգացման գրասենեակի վարիչ Վարդան Թաշճեան: Վերահսկումը կատարեց Սուրբ Գրիգոր Նարեկացի կեդրոնի տնօրէն Հայր Վարդան վարդապետ Գազանճեան: Նշեալ բոլոր աշխատանքներուն իրականացումը կարելի դարձաւ Լիբանանի Հայ կաթողիկէ վարժարաններու տնօրէններու խորհուրդի գործակցութեան շնորհիւ: Ուղեցոյցներու արեւելահայերէնէ արեւմտահայերէն փոխադրումը կատարեց Կարինէ Մինասեան Թաշճեան:

Սոյն համարով ներկայացնելով ծրագրի՝ նախակրթարանի Ա., Բ., Գ. եւ Դ. դասարաններուն վերաբերող մասը, կ'ակնկալենք, որ ան ծառայէ լիբանանահայ վարժարաններուն մէջ հայոց լեզուի ուսուցման պայմաններու բարելաման եւ պահանջներու կատարման՝ հանդիսանալով օգտաշատ ուղեցոյց հայերէնի ուսուցիչներուն համար: Ծրագիրը օգտագործող ուսուցիչները, անոր գործածութեան լոյսին տակ յառաջ եկած դիտողութիւններով ու առաջարկներով կրնան մեծապէս նպաստել անոր բարելաման գործին, որ պիտի շարունակէ մերը ըլլալ: Կ'ակնկալենք, որ սոյն ծրագիրը ուղեցուցական արժէք ներկայացնէ՝ նաեւ հայկական վարժարանի նախակրթական համակարգի հայերէնի ուսուցիչներուն համար, հաշուի առնելով այն լայն ընդհանրութիւնները, որոնք գոյութիւն ունին սփիւռքահայ՝ մանաւանդ միջին արեւելեան երկիրներու մէջ գործող հայկական վարժարաններուն մէջ:

Սուրբ Գրիգոր Նարեկացի կեդրոն
Դպրոցական հայագիտության զարգացման գրասենեակ

Հայոց Լեզուի Ուսուցման Ծրագիր

Լիբանանի Հայկական
Վարժարաններու Նախակրթարաններու
Ա.էն Դ. դասարաններուն համար

Հեղինակ՝ Երեանի Խ. Աբովեանի անուան պետական
մանկավարժական համալսարանի փրոֆեսոր
դոկտ. Ճուլիեթա Կիլամիրեան

Մասնակցութեամբ՝ Լիբանանի հայ կաթողիկէ
վարժարաններու նախակրթարանի ուսուցիչներուն

Գործակցութեամբ՝ Լիբանանի հայ կաթողիկէ
վարժարաններու տնօրէններու խորհուրդին

Ուղեցոյցի պատրաստութեան ծրագրի համակարգող՝
Վարդան Թաշճեան

Ծրագրի վերահսկող՝
Հայր Վարդան վարդապետ Գազանճեան

Արեւելահայերէնէ արեւմտահայերէն փոխադրումը՝
Կարինէ Մինասեան Թաշճեանի



ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Նախակրթարանի Ա.Էն Դ. դասարաններուն համար նախատեսուած սոյն ծրագիրը իր մէջ կը ներառնէ բոլոր այն խնդիրները, որոնք նախատեսուած են նշուած դասարաններուն մէջ հայոց լեզուի դասերուն ժամանակ իրականացնելուն համար:

Ա.Էն Դ. դասարաններուն մէջ հայոց լեզուի դասաւանդումի հիմնական խնդիրներն են՝

1. Դպրոցականներուն մէջ հետաքրքրութիւն յառաջացնել հայոց լեզուի եւ հայ գրականութեան նկատմամբ, դաստիարակել մայրենի լեզուն անաղարտ պահելու, զայն իբրեւ ազգապահպանումի հիմնական գործօն ընդունելու ձգտում:

2. Ձեւաւորել հայեցի հոգեկերտուածք, լեզուամտածողութիւն:


3. Զարգացնել աշակերտներու բանաւոր եւ գրաւոր խօսքը, կատարելագործել կարդալու, կարդացածը հասկնալու կարողութիւնները:

4. Սորվեցնել հայոց լեզուի քերականութեան հիմնական դրոյթները՝ զանոնք ծառայեցնելով գրագէտ բանաւոր եւ գրաւոր խօսք կառուցելու կարողութիւններու ձեւաւորման:

5. Զարգացնել ազգային եւ համամարդկային արժէքներ, նպաստել ազգային ինքնակազմաւորումին:

Ծրագիրը կազմուած է պարուրածեւ սկզբունքով, որ կը նշանակէ անընդհատ անդրադարձ անցածին. դասարանէ դասարան լեզուական նիւթը կը կրկնուի՝ փոքր չափաբաժիններով զանոնք աստիճանաբար ընդլայնելով, հարստացնելով:

Ծրագիրին մէջ կը գործածուին **ունակութիւն, կարողութիւն եւ հմտութիւն** եզրաբառերը: Անոնք, ըստ



էութեան, կը ներկայացնեն երեխաներու որեւէ գործողութիւն կատարելու բնագաւառին մէջ ձեռք բերած մակարդակները: Եւ այսպէս՝ երբ կը գործածուի որեւէ **ունակութիւն ձեռք բերել** արտայայտութիւնը, կը նշանակէ, որ երեխան տակաւին նոր սկսած է սորվիլ տուեալ գործողութիւնը: Անոր կատարումին կամ իմացութեան մակարդակը կը գտնուի առաջին աստիճանին վրայ. երեխան ընդամէնը ունի, կը դրսեւորէ կամ կը ձգտի կատարել տուեալ յանձնարարութիւնը կամ կը կատարէ՝ թոյլ տալով սխալներ, բացթողումներ: Երեխան այս պարագային տակաւին կարիք ունի դաստիարակի օգնութեան: Կը նշանակէ, որ տակաւին պէտք է աշխատանք, ջանքեր եւ ժամանակ, տուեալ առաջադրանքին կատարումին ձեւը իրացնելու համար:

Երբ երեխային ձեռքբերումներուն մասին խօսած ատեն կը գործածուի **կարողութիւն** եզրաբառը, կը նշանակէ, որ խնդիր կը դրուի անոր տուեալ բնագաւառին մէջ ունեցած ունակութիւնը համարել կատարելագործուած կամ պէտք է բարձրացնել մէկ մակարդակով: Ասիկա կը նշանակէ, որ երեխան **կրնայ** կատարել տուեալ գործողութիւնը: Օրինակ, երբ կ'ըսենք, որ երեխան պէտք է ունենայ **կը** մասնիկը եւ է օժանդակ բայը բառին հետ միասին ընթերցելու ունակութիւն, կը նշանակէ, որ ան պէտք է իմանայ այդ մասին եւ պէտք է ձգտի այդպէս կարդալ: Սակայն անկէ պէտք չէ ակնկալել սահուն ընթերցանութիւն եւ որ ան երբեք պէտք չէ սխալի. այդպէս կարդալու կարողութիւնը նոր կը ձեւաւորուի, ուրեմն՝ երեխան **տակաւին կը սորվի**, անոր կարողութիւնը ձեւաւորումի ճամբուն վրայ է: Երբ կը գործածուի **պէտք է կարենայ** բառակապակցութիւնը, կը նշանակէ, որ կ'ակնկալուի ոչ անթերի աշխատանք. երեխան երբեմն կրնայ սխալիլ, բացթողումներ թոյլ տալ կամ մոռնալ որոշ կանոններ: Օրինակ, երեխան անձանօթ բնագիրը կրնայ

կարդալ՝ որոշ բացթողումներ թոյլ տալով: Այնուամենայնիւ, ան ունի կարդալու կարողութիւն:

Կարողութիւնը **հմտութիւն** կը դառնայ անընդհատ կրկնուող վարժութիւններու ճամբով: Երբ կը նշուի, որ երեխան տողերուն մէջ կողմնորոշուելու հմտութիւն պէտք է ունենայ (գրած ժամանակ), կը նշանակէ ան պէտք է չսխալի երբեւէ կամ գրեթէ պէտք է չսխալի գրած ժամանակ կամ պէտք է ելլէ տողին սահմանէն:

Այսպէս, օրինակ, կարդացած ժամանակ **ուսուցիչները** տառերը հեգելով միավանկ կամ երկվանկ բառերը կարդալն է. երեխան կը ճանչնայ տառերը, բայց տակաւին անծանօթ կամ ծանօթ բազմավանկ բառերը կարդալ չի կրնար, այլ վերջինները կը կարդայ հեգելով կամ վանկերով:

Կարդալու **կարողութիւնը** կը ներկայացնէ ընթերցելու նոր՝ աւելի բարձր մակարդակ, երբ երեխան կը կարդայ անսխալ, պահպանելով ճիշդ եւ հասկնալով կարդալու որակական յատկանիշները, սակայն յաճախակի երեխան կը կարդայ նախադասութեան բառերը զատ-զատ, այսինքն՝ բառերուն միջեւ տրամաբանական կապեր չի ստեղծեր, անհարկի դադարներ կ'առնէ, բառերը կ'ընթերցէ ոչ թէ աչքի մէկ ակնդրումով, այլ միտքէն կ'ընթերցէ, ետքը՝ բարձրաձայն կը կարդայ: Միաժամանակ կարդալու կարողութիւն չունեցող մարդը երբեմն ընթերցած ժամանակ կը կրկնէ որոշ բառեր (ժամանակ կը շահի՝ յաջորդ բառը միտքին մէջ կարդալու համար), թոյլ կու տայ մասնակի ուղղափոսական սխալներ: Ուղղափոսական սխալներ են **կը** մասնիկը (*կը գրեմ*) եւ է օժանդակ բայը բառէն զատ կարդալը (*ձմեռ է*), **գ-ք**, **դ-թ**, **ջ-չ** եւ այլ նմանօրինակ բաղաձայններու ուղղափոխութիւնը. բառին մէջ գրուող **դ**-ն կը կարդացուի **թ** (*կարդայ*), **գ**-ն՝ **ք** (*կա-*

րագ), ջ-ն՝ չ (աղջիկ), եայլն:

Կարդացողը **հմուտ է**, այսինքն՝ ունի կարդալու **հմտութիւն**, կը նշանակէ ան կը կարդայ անթերի՝ ճիշդ, սահուն, հասկնալով, արտայայտիչ, կը պահպանէ սեփական խօսքին արագութիւնը, ուղղախօսական կանոնները եւ հայերէնի գրական շեշտը: Ասիկա ընթերցելու ամէնէն կատարեալ մակարդակն է, որ պէտք է իրականացուի դպրոցին մէջ:

Ծրագրին բովանդակութիւնը բաւականին լայն է՝ ընդարձակ: Անիկա կը ներկայացնէ ոչ միայն մայրենի լեզուին խնդիրները. մայրենի լեզուին պարապմունքները (դասապահերը) միայն հայերէն խօսելու եւ գրածանաչ դարձնելու համար չեն: Մայրենին պէտք է դառնայ երախայի աշխարհաճանաչումի, ընկերային-կենցաղային յարաբերութիւններու ձեւաւորումին, հոգեկան զգացմունքային որակներու զարգացումին ուղեկցող գործօն, միջոց. ամէն ինչին մասին մեծը երեխային հետ պէտք է խօսի մայրենիի միջոցաւ եւ մայրենի լեզուի հոգեբանական հիմքերուն վրայ: Միայն այս ճանապարհով մենք կը ձեւաւորենք երախայի՝ մայրենի լեզուով մտածողութիւնը եւ հայու հոգեկերտուածքը:

Ծրագրային նիւթը ընդարձակ է, ու անիկա տրուած է ամբողջ տարուան ընթացքին իւրացնելու համար: Սակայն, բնական է, որ ողջ տարուան ընթացքին սորվեցուցած ամէն ինչ չէ, որ երեխան **կրնայ** կամ **պարտաւոր է իւրացնել** կարողութեան մակարդակով: Ըիշդ ասիկա հաշուի առնելով մենք ծրագիրին մէջ նախատեսած ենք «ԶԱՓՈՐՈՇԻԶԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ» բաժինը, ուր կը ներկայացուի այն պարտադիր սահմանը, որուն պէտք է հասնին նախակրթարանի աշակերտները՝ տարեվերջին:

«ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ» խորագիրին ներքոյ կը ներկայացուին հիմնականին մէջ **կարողութիւններ**, այսինքն՝ ոչ գիտելիքներ: Ասիկա կը նշանակէ, որ մենք երախայէն պէտք է ակնկալենք գիտակցական գործողութիւններ (ինչ որ ընեն, պէտք է հասկնան) եւ ոչ թէ տեսական բացատրութիւններ, սահմանումներ, կանոններ:

«ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ»ը պարտադիր են տարեվերջին բոլոր երախաներուն համար, անշուշտ, մակարդակներու տարբերութեամբ, որ կը պայմանաւորուի երախաներու զգայարաններու, հոգեկան գործընթացներու զարգացածութեան մակարդակներով:

Ծրագրով նախատեսուած բոլոր խնդիրներու լուծումի ձեւերու, մեթոտներու, հնարներու, վերջապէս՝ ողջ գործընթացին հիմքը կը կազմեն երախայակեդրոն մօտեցումները, զորս առաջին հերթին հնարաւոր է իրականացնել երախաներէն ԻԻՐԱՔԱՆՉԻԻԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՎ: Իւրաքանչիւր երախայի հնարաւոր է մասնակից դարձնել ուսուցումին՝ համագործակցային, փոխ գործուն մօտեցումներու՝ որքան հնարաւոր է շատ կիրառումով, աշխատանքը կազմակերպելով փոքր խումբերով եւ զոյգերով:

Ա.

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ



1. ԸՆԹԵՐՑՈՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ ԵՒ ԶԱՐԳԱՅՈՒՄ

1.1. ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ

- Կրկնել մանկապարտեզի մէջ սորված հայոց այբուբենի տառերը եւ տառանունները:

- Ամրակայել պարզ բառերը առանց հեգելու ընթերցելու երեխաներու կարողութիւնը՝ զայն մինչեւ տարեվերջ հասցնելով ճիշդ եւ հասկնալով կարդալու մակարդակի (ընթերցողական կարողութեան առաջին մակարդակ):

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Ա) ճիշդ կարդալ կը նշանակէ՝

կարդալ այնպէս, ինչպէս գրուած է, առանց գիրեր, վերջաւորութիւններ աւելցնելու, պակսեցնելու, պահպանելով. - հայերէնի գրական շեշտը, որ կը դրուի բառի վերջին ձայնաւորին վրայ, - ուղղախօսութեան կանոնները.

ա. բաղաձայններու ընթերցումի ձեւը (գ-ք, կարագ, կարգապահ, դ-թ, արդուկ, զարդ, ջ-չ, արջ, աղջիկ, ծ-ց, արձան, արձակուրդ, դ-խ, աղբիւր, բ-փ, սուրբ, Սերոբ, Եայլն)

բ. է օժանդակ բայը եւ կը մասնիկը բային հետ միասին կարդալու կարողութիւնը

Բ) Հասկնալով կարդալ կը նշանակէ՝

ա. հասկնալ ընթերցած բնագիրի բոլոր բառերը, արտայայտութիւններուն իմաստները,

բ. ըմբռնել կարդացած ստեղծագործութեան գաղափարը՝ հիմնական միտքը, եւ զայն ներկայացնել սեփական բառերով,

գ. որոշել գործող անձերուն՝ կերպարներու արարքներու պատճառահետեւանքային կապերը, անոնց զգացմունքներուն բնոյթը եւ քանի մը նախադասութիւններով անոնց մասին ներկայացնել սեփական կարծիքը (դատողութիւններ ընել):

- Ամրակայել կը եղանակիչը եւ օժանդակ բայերը բայերուն հետ համաձոյլ կարդալու երեխաներուն կարողութիւնը:

- Ձեւաւորել եւ զարգացնել կարդացած բնագիրին շուրջ ուսուցիչի տուած հարցերուն ամբողջական նախադասութիւններով պատասխանելու կարողութիւն:

- Ձեւաւորել ուսուցիչի օժանդակող հարցերուն օգնութեամբ կարդացած ստեղծագործութեան հիմնական միտքը՝ գաղափարը (ի՞նչ կը սորվեցնէ մեր ընթերցած հեքիաթը, պատմուածքը) հասկնալու եւ այդ կապակցութեամբ դատողութիւններ կատարելու կարողութիւն:

- Ձեւաւորել դասընկերոջ կարդալու ժամանակ աչքերով բնագիրը կարդալու (հետեւելու) պարզ մակարդակի կարողութիւն եւ ուսուցիչի հրահանգով ճիշդ նոյն տեղէն շարունակելու ունակութիւն:

- Զարգացնել ուսուցիչի յանձնարարութեամբ ընթերցուած ստեղծագործութեան մէջ անհրաժեշտ բառը, բառակապակցութիւնը, նախադասութիւնը գտնելու եւ ընթերցելու ունակութիւն:

• Սորվեցնել դասագիրքին մէջ զետեղուած ստեղծագործութիւնը շարունակելով, հատուածաբար մեկնաբանելով, ընտրովի եւ դերերով կարդալ:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Նշուած կարդալու տեսակները (շարունակելով, հատուածաբար, ընտրովի, դերերով) դասարանին մէջ պէտք է իրականացնել ձիշդ նոյն յաջորդականութեամբ, ինչպէս նշուած է: Անոնցմէ մէկը կը նախապատրաստէ միւր: Երեխաները նախ պէտք է կարդան՝ *շարունակելով* մէկը միսին, յետոյ պէտք է կարդան *հատուած հատուած* (պարբերութիւններով) եւ բացատրեն իւրաքանչիւր հատուածին իմաստը (ինչ հասկցաք, ինչի՞ մասին էր այս հատուածը): Այնուհետեւ պէտք է ընթերցեն *ընտրովի*, այսինքն՝ ուսուցիչի առաջարկած հարցերուն պատասխանները պէտք է գտնեն բնագիրի մէջ եւ կարդան: Այս ամէնէն յետոյ է, որ կարելի է անցնիլ *դերերով* կարդալուն: Այս տեսակի ընթացքը կ'օգնէ երեխաներուն ձիշդ կողմնորոշուիլ բնագիրին մէջ եւ չշփոթել դերերը:

ՅԻՇԵՆՔ. Միայն կարդալու այս տեսակներուն կիրառումով է, որ հնարաւոր է աշակերտները դարձնել հասկըցող ընթերցող եւ սէր ու հետաքրքրութիւն յառաջացնել ընթերցանութեան նկատմամբ:

• Ձեւաւորել կարդացած բնագիրին մէջ եղած անծանօթ բառերուն իմաստը գուշակութեան ձանապարհով որոշելու եւ ըստ այնմ նախադասութեան իմաստը հասկնալու

ունակութեան պարզ մակարդակ:

- Ճանչնալ տալ առողջանութեան նշանները, սորվեցնել անոնց անունները, զանոնք կրող նախադասութիւններու եւ բառերու արտաբերումի եղանակները:

1.2 ԿԱՐԴԱՑԱԾԸ ՀԱՍԿՆԱԼՈՎ ՎԵՐԱՐՏԱԴՐԵԼՈՒ ՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

- Սորվեցնել կարդացած փոքրածաւալ ստեղծագործութիւնը ուսուցիչի հարցումներուն միջոցաւ վերարտադրել (պատմել)՝ գործածելով ստեղծագործութեան բանալի բառերը եւ արտայայտութիւնները:

ՅԻՇԵՆՔ. Բանալի կը կոչուին այն բառերը, որոնք կարդացած ստեղծագործութեան մէջ գլխաւորներն են, հիմնականը, եւ առանց որոնց գործածութեան հնարաւոր չէ ստեղծագործութիւնը մանրամասն կամ համառօտ վերարտադրել: Անոնք կը ներկայացնեն կարդացած բնագիրին հիմնական միտքը եւ կարելոր են ստեղծագործութեան իմաստի ընկալումին համար:

- Ձեւաւորել դասընկերոջ կամ ուսուցիչի կողմէն պատմած ստեղծագործութեան ընթացքին հետեւելու եւ ուսուցիչի յանձնարարութեամբ ցանկացած հատուածէն շարունակելու կարողութիւններ:

- Սորվեցնել կարդացած ստեղծագործութիւնը բնագիրին հարազատ վերարտադրել (պատմել)՝ անհրաժեշտութեան պարագային կատարելով փոքրիկ, պարզ լրացումներ, դատողութիւններ:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Առաջին դասարանցիին համար աելի դիրին է ընդարձակ՝ մանրամասն պատմելը: Համառօտ պատմելու համար ան պէտք է կատարէ ոչ կարելոր միտքերու որոշում եւ առանձնացում, գլխաւոր միտքերու կամ կարելոր իրողութիւններու տարանջատում՝ պատմելու համար, իսկ ասիկա չափազանց բարդ գործողութիւն է 7-8 տարեկան դպրոցականի մը համար: Հետեւաբար, առաջին դասարանին մէջ աշակերտները պէտք է կարդացած ստեղծագործութիւնը պատմեն մանրամասն, այն ալ՝ անպայման ուսուցիչի նախապէս պատրաստած հարցաշարին՝ ծրագիրին օգնութեամբ:

1.3 ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆ

- Ձեւաորել հետաքրքրութիւն մանկական գիրքին նկատմամբ. վերցնել, թերթատել, կարդալ խորագիրը, հեղինակին անունը, դիտել պատկերները:

- Դասարանին մէջ ստեղծել մանկական գիրքերու անկին (ցուցափեղկ), երեխաներուն արտօնել՝ խթանել, որ դադարներուն ժամանակ անոնք վերցնեն այդ գիրքերը, թերթատեն, դիտեն պատկերները, կարդան փոքրիկ հատուածներ:

- Այցելութիւն դպրոցի գրադարան (ուսուցիչին ուղեկցութեամբ), հանդիպում դպրոցի գրադարանավարուիին (կամ գրադարանավարին) հետ, ծանօթութիւն գրադարանի հայալեզու մանկական գրականութեան հետ: Յանձնա-

րարել գիրքերը առնել գրադարանէն՝ տունը ընթերցելու համար (փոքրածաւալ ստեղծագործութիւններու պատկերազարդ տպագրութիւն): Ընտրութիւնը կրնան կատարել ինչպէս երեխաները, այնպէս ալ՝ ուսուցիչները:

- Ծանօթութիւն *գիրքի հեղինակ, խորագիր, գիրքի կողք (կազմ) եւ գիրքի բովանդակութիւն (ցանկ) բառակապակցութիւններուն հետ:*

- Սորվեցնել որեւէ գիրքի կամ ստեղծագործութեան մասին խօսած ժամանակ գործածել հեղինակին անունը եւ գիրքին խորագիրը:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՔՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՁԻ ՀԱՄԱՐ

1. Աշակերտը կը կարդայ ճիշդ եւ հասկնալով:

2. Կը պատասխանէ կարդացածին վերաբերեալ ուսուցիչի տուած հարցումներուն ամբողջական նախադասութիւններով:

3. Կ'որոշէ կարդացած ստեղծագործութեան մէջ իրեն անծանօթ բառերը, կը փորձէ գուշակումի ձանապարհով բացատրել անոնց իմաստը:

4. Կրնայ աչքերով հետեւիլ ուսուցչուհիին կամ ընկերոջ կարդացածին եւ ուսուցչուհիին պահանջով շարունակել ընդհատուած տեղէն:

5. Կրնայ ուսուցչուհիին հարցերուն օգնութեամբ բնագիրին հարազատ պատմել կարդացած ստեղծագործութեան բովանդակութիւնը:

6. Ունի անծանօթ մանկական գիրքով հետաքրքրուելու ձգտում, կրնայ կարդալ 1-2 անծանօթ նախադասութիւններ մանկական գիրքէն: (Նախադասութիւնները պէտք է կազմուած ըլլան երեխաներուն ծանօթ բառերով):

2. ԽՕՍՔ, ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

2.1. ԲԱՌԱՄԹԵՐՔԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄ

• Ամրապնդել եւ հարստացնել մանկապարտէզին մէջ երեխաներուն ձեռք բերած բառամթերքը. ոչ միայն ըսել տարրուան եղանակները ներկայացնող անունները, այլեւ զանոնք բնութագրող բառերը (*ոսկի աշուն, բերքառատ աշուն, տերեւաթափող աշուն, ձմեռ - ցրտաշունչ ձմեռ, ձիւնատատ ձմեռ, ձերմակ ձմեռ, զուարճալի ձմեռ, գարուն - պայծառ գարուն, ճնծաղիկով գարուն, ծաղկած գարուն, կանաչ գարուն ամառ - տաք ամառ, ուրախ ամառ, արեւաշող ամառ, մրգաբեր ամառ*):

• Բառամթերքը հարստացնել բնութեան երեւոյթները ներկայացնող բառերով եւ զանոնք բնութագրող բառակապակցութիւններով (*օրինակ, անձրեւ - յորդառատ անձրեւ, տաք անձրեւ, բարակ անձրեւ, ձիւն - ձերմակ ձիւն, փափուկ ձիւն, թաց ձիւն, քամի - անձրեւաբեր քամի, տաք քամի, փոշոտ քամի, ուժեղ քամի, ւաերիչ քամի, հով - մեղմիկ հով, քնքուշ հով, տաքուկ հով, եւայլն*):

• Ընդարձակել ընդհանրացնող անուններուն ցանկը եւ անոնց մէջ մտնող բառախումբերը (*օրինակ, սպասք - սկահակ, ջրաման, բաժակակալ, մոխրաման կահոյք - սպասքապահարան, լրագրակալ, զարդասեղան, եւայլն*):

• Կարելորել բառերը յստակ, մաքուր, մինչեւ վերջին հնչիւնը որոշակի բարձրութեամբ (ոչ ցած եւ ոչ ալ պոռալով) եւ արեւմտահայերէն մաքուր հնչեղութեամբ արտասանելու երեխաներու կարողութեան ձեւաւորումը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՒՒՆ

Երեխաներու բառամթերքի հարստացումի ամենէն զօրաւոր աղբիւրը ուսուցիչի խօսքն է, անոր գործածած հարուստ գրական բառամթերքն է եւ հետեւողականութիւնը երեխաներու խօսքին նկատմամբ: Ի դէպ, անիմաստ է երեխաներուն բառը կրկնել տալ անմիջապէս ուսուցիչի խօսքէն յետոյ: Անհրաժեշտ է ուսուցանուող բառը անընդհատ կրկնել սեփական խօսքին մէջ այնքան ժամանակ, մինչեւ երեխաները իրացնեն զայն եւ յետոյ պահանջել երեխաներէն այդ բառերը գործածել խօսելու ժամանակ, պատմելու ատեն, իրարու հետ հաղորդակցելու ընթացքին:

- Գործուն բառամթերքը (ամենօրեայ գործածական՝ աշխոյժ) հարստացնել *շնորհակալութիւն, ներողութիւն, հաճիս (հաճեցէք), կը խնդրեմ, բարի, բարի օր, բարեւ Ձեզ, սիրով* եւ նմանօրինակ այլ բարեկիրթ՝ «հրաշալի», «կախարդական» բառերով:

2.2. ԽՕՍԵԼԱՁԵՒԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

- Ձեւաւորել եւ զարգացնել տարեկիցներու եւ ւազններու հետ խօսքային շփումի մէջ մտնելու տարրական կարողութիւններ. մեծերուն եւ անծանօթ մարդոց *Դուք, Ձեր, Ձեզ* յոգնակի դերանուններով դիմելու ամբողջական նախադասութիւններով՝ առանց ձօձուելու, առանց պոռալու, շտապելու, խօսակիցի աչքերուն մէջ նայելով միտքերը արտայայտելու կարողութիւններ:

- Ձեւաւորել հեռաձայնով խօսած ժամանակ, ուել մէկը խնդրելու, հասարակական վայրերու մէջ (խանութ, վար-

սայարդար, դեղարան, գրադարան, հիանդանոց, եայլն) խօսակցութեան մէջ մտնելու կարողութիւններ:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ


Նշուած եւ յետագային եւս նշուող կարողութիւնները հիմնականին մէջ պէտք է ձեւաւորել մայրենիի դասագիրքերուն մէջ զետեղուած ստեղծագործութիւններու շուրջ տարուող բարոյախրատական զրոյցներու ծամբով, եւ հետեւողակա նօրէն հետամուտ ըլլալով աշակերտներու կողմէն իրաքանչիւր ցուցումի կատարումին:

- Իրադրային խաղերու, լեզուական վարժութիւններու կատարումի ճանապարհով երեխաներուն սորվեցնել տարբեր իրավիճակներու մէջ խօսքային գործունէութիւն ծաւալելու ունակութիւն (օրինակ՝ ինչպէս արդարանալ, սեփական տեսակէտը ներկայացնել, բարեկիրթ ձեւով հակադրուիլ ուրիշի կարծիքին, հիմնաւորել իր մօտեցումը, եայլն):

- Ձեւաւորել անձանօթ մարդոց հետ անհրաժեշտութեան պարագային հաղորդակցելու պարզ ձեւեր (օրինակ՝ *ներեցէք, տիկին, կարելի է Ձեզի հարցնել, հաճեցէք ինձի բացատրել՝ ո՞ր կը գտնուի Սուրբ Գէորգ եկեղեցին, տիկին, Դուք Ձեր գիրքը վարը ձգեցիք, եայլն*):

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՆԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՁԻ ՀԱՄԱՐ

1. Աշակերտը ունի անհրաժեշտ բառամթերք իր կատարած ստեղծագործութիւններու բովանդակութեան, գործող անձերու՝ կերպարներու վարքը վերլուծելու, մեծե-



րուն եւ տարեկիցներուն հետ բարեկիրթ հաղորդակցելու համար:

2. Կրնայ ներկայացնել իր միտքերը, մտորումները, կը խօսի տարուան եղանակներուն, բնութեան երեւոյթներուն, իր զգացումներուն մասին՝ գործածելով հիմնականին մէջ ուսումնական տարուան մէջ սորված բառերը:

3. Ունի հաղորդակցական կարողութիւններ. գիտէ ինչպէս հաղորդակցիլ տարեկիցներուն եւ մեծերուն հետ, կը տիրապետէ քաղաքավարի հաղորդակցելու տարրական կարողութիւններուն:

4. Կրնայ ներկայացնել իր տեսակէտը տարիքին յարիր թեմաներու շուրջ, կը բացատրէ իր գործողութիւնները, կը հիմնաւորէ զանոնք:

3. ԼԵԶՈՒԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

3.1. ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ՄԷՋ ՁԵՌՔ ԲԵՐԱԾԻ ԿՐԿՆՈՒԹԻՒՆԸ

- Ամրակայել եւ ընդարձակել մեծատառերուն գործածութեան մասին երեխաներու ունեցած գիտելիքները եւ կարողութիւնները.

- մեծատառը մարդոց անուններու, մականուններու սկիզբ,
- մեծատառը նախադասութեան սկիզբը,
- մեծատառը ստեղծագործութիւններու խորագիրներուն սկիզբը:

- Գաղափար հնչիւնի եւ անոր տառին մասին. ձայնաւոր եւ բաղաձայն հնչիւններ:

- Կետադրական նշաններ եւ անոնց մասին պարզ մեկնաբանութիւններ:

3.2. ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

- Գաղափար նախադասութեան մասին՝ որպէս ամփոփ միտք արտայայտող բառերու խումբ: Վերջակէտը նախադասութեան վերջը:

- Ձեւաւորել եւ զարգացնել առաջարկուած բառը պարզ նախադասութեան մէջ գործածելու (նախադասութիւն կազմելու) կարողութիւն:

- Սորվեցնել տարբերել բառը, բառակազմութիւնը նախադասութենէն:

• Գործնական ծանօթութիւն կետադրական (վերջակէտ, ստորակէտ, բազմակէտ) եւ առոգանութեան (շեշտ, հարցման նշան եւ բացազանչութեան՝ երկարացումի) նշաններուն:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Առանց ամէնէն պարզ կետադրական եւ առոգանութեան նշաններու ծանօթացումին գործնականօրէն (ընթերցուող ստեղծագործութեան մէջ բացատրելով ատոնց իմաստը) հնարաւոր չէ զարգացնել երեխաներու՝ հասկնալով եւ արտայայտիչ կարողալու կարողութիւնները:

ՅԻՇԵՆՔ. Երբ աշակերտը կը հանդիպի որեւէ կետադրական նշանի, անոր անունը պէտք է անպայման գիտականօրէն ճիշդ երեխաներուն հաղորդուի եւ ամենապարզ ձեւով բացատրուի նշանակութիւնը տուեալ նախադասութեան մէջ: Օրինակ, պէտք է բացատրուի՝ հոս բութ դրուած է, որովհետեւ կը բացակայի գացի բառը - Ես գացի դպրոց, իսկ քոյրիկս՝ մանկապարտէզ: Պայման չէ, որ առաջին իսկ անգամէն բոլոր երեխաները հասկնան եւ կրկնեն ուսուցիչին. պարզապէս թող լսեն ճիշդ մեկնաբանութիւններ (անշուշտ, մատչելի, պարզ լեզուով): Բազմիցս կրկնելու (ուսուցիչի կողմէն) պարագային, երեխաները նախ կ'ըմբռնեն եզրաբառը, յետոյ աստիճանաբար կը հասկնան:

• Սորվեցնել առաջարկուած բառով բառակապակցութիւն կազմել (ածական+գոյական):

3.3. ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ, ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ

- Զարգացնել եւ ամրակայել բառը վանկերու բաժնելու երեխաներու կարողութիւնը:

- Գաղափար ձայնաւորին վանկարար յատկանիշին մասին (հարաքանչիւր վանկ ունի մէկ ձայնաւոր):

- Բառին վանկատումը՝ որպէս տողադարձի միջոց: Ձեւաւորել վանկատումի միջոցաւ բառը տողադարձելու ունակութեան պարզ մակարդ:

- Գործնականօրէն ձեւաւորել առաջարկուած բառին հականիշը գտնելու, անոր իմաստը բացատրելու եւ նախադասութեան մէջ գործածելու կարողութիւններ:


- Գաղափար մէկուն (եզակի) եւ շատին (յոգնակի) մասին, սորվեցնել խօսքի մէջ այդ ձեւերը ճիշդ կիրառելու ունակութիւն:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Նշուած լեզուական գիտելիքները կարիք չկայ (եւ անիմաստ է, միեւնոյնն է՝ երեխաները չեն հասկնար) տեսականօրէն, այսինքն՝ կանոններու ծանապարհով բացատրել: Ուղղակի կարդացած ստեղծագործութիւններուն մէջ հանդիպած դէպքերուն վրայ պէտք է գրաւել երեխաներու ուշադրութիւնը եւ կատարել կիրառական լեզուական վարժութիւններ:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Աշակերտը գիտէ, որ նախադասութեան, անուններու



Եւ մականուններու առաջին տառերը կը գրուին մեծատառով եւ նախադասութեան վերջը կը դրուի վերջակէտ:

2. Գիտէ, որ ստեղծագործութեան խորագիրի առաջին տառը կը գրուի մեծատառով:

3. Կը ճանչնայ կէտադրական պարզ նշանները, գիտէ անոնց եւ առոգանութեան նշաններուն իմաստը եւ կարդացած ժամանակ կը պահպանէ անհրաժեշտ առոգանութիւն:

4. Գործնական ծամբով կը տարբերէ ձայնաւոր եւ բաղաձայն հնչիւնները, գիտէ ձայնաւորին վանկարար (վանկակազմիչ դերը):

5. Բառը կը բաժնէ վանկերու եւ ըստ ատոր տողադարձ կ'ընէ:

6. Առաջարկուած բառը կը գործածէ նախադասութեան մէջ, բառակապակցութիւն կը կազմէ ածական+գոյական կաղապարով (համեղ հաց, կարմիր բալ, եայլն):

- Կը տարբերէ եզակի եւ յոգնակի թիով կազմուած գոյականները, կրնայ եզակի թիով դրուած գոյականը դարձնել յոգնակի եւ հակառակը:

4. ԳՐԱԻՈՐ ԽՕՍՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

4.1. ՎԱՅԵԼՈՒՉ ԳՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ

- Աշխատանք տանիլ մեսրոպեան այբուբենի գիրերը վայելուչ գրելու ուղղութեամբ: Ծարունակել գրիչով գրելու երեխաներու կարողութեան զարգացումը:

- Սորվեցնել կողմնորոշուիլ տեսրակի տողին վրայ գրել՝ առանց անելորդ (լրացուցիչ) տող «փախցնելու», նոր տողը մէկ մատ խորունկ սկսելու, բառերու միջեւ մէկ «ս» գիրին չափով, իսկ բառին գիրերուն միջեւ կէս «ս» գիրին չափ տեղ ձգելու:

4.2. ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ (ԲԱՌԸ ԵՒ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆԸ ԱՆՍԽԱԼ ԳՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՄՇԱԿՈՒՄ)

- Գործնական ծանօթութիւն է-ե -ի, ի(ւ)-ի, օ-ո-ի, ու-ի, ւ-ի եւ այ, ոյ -ի ուղղագրութեան:

ՅԻՇԵՆՔ. Բառը ծիշդ՝ ուղիղ գրելու կարողութիւնը առաջին հերթին կը ձեւաւորուի գրելու ծամբով, մասնաւորապէս՝ ընդօրինակելու (արտագրելու): Հետեւաբար, նառաջին դասարանին մէջ պարզապէս անհրաժեշտ է երեխաներուն ուշադրութիւնը հրաւիրել նշուած ուղղագրութիւնը ունեցող բառերուն վրայ, որոնք կը հանդիպին աշակերտին դասագիրքին ստեղծագործութիւնները ընթերցած ժամանակ: Անշուշտ, ատոնք անհրաժեշտ է նաեւ գրել գրատախտակի վրայ եւ տեսրակին մէջ:

4.3. ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒԹԻՒՆ (ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆ)

• Սորվեցնել ընդօրինակել նախ գրատախտակէն, ապա դասագիրքէն բառեր, բառակապակցութիւններ, յետոյ նաեւ՝ տարվերջին՝ 1-2 նախադասութիւն:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Առաջին դասարանին մէջ կարելի է կիրառել արտագրութեան երկու տեսակն ալ՝ ընդօրինակումի եւ ստեղծագործական: Ընդօրինակութեան ժամանակ աշակերտը կ'արտագրէ ճիշդ այնպէս, ինչպէս տրուած է գիրքին մէջ կամ գրատախտակին վրայ՝ առանց որեւէ բան փոխելու: Ատոնք կրնան ըլլալ 3-4 բառ կամ 2 բառակապակցութիւն: Աստիճանաբար կարելի է մինչեւ տարեվերջ արտագրել տալ 5-6 բառ:

Երկրորդ կիսամեակէն կարելի է կիրառել նաեւ ստեղծագործական պարզ առաջադրանք ունեցող ընդօրինակութիւններ: Ստեղծագործական արտագրութեան նիւթին մէջ աշակերտը կը կատարէ որեւէ աշխատանք: Օրինակ, արտագրել եւ ամբողջացնել բաց ձգուած տառը (է, թէ ե):

ՅԻՇԵՆՔ. Թէ՛ ընդօրինակումի, թէ՛ ստեղծագործական արտագրութիւններու ժամանակ աշակերտները ոչ միայն ձեռք կը բերեն ուղղագրական կարողութիւններ, այլեւ կը զարգանայ անոնց ուշադրութիւնը, յիշողութիւնը, ուշիմութիւնը, անոնք կը սորվին նաեւ գեղեցիկ գրել:

Առաջին դասարանին մէջ ամբողջ ուսումնական տար-
ուան ընթացքին գրաւոր խօսքի տեսակներէն պէտք է գե-
րակշռէ արտագրութիւնը:

4.4. ԻՆՔՆԱԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ

Սորվեցնել նախապատրաստուելէն յետոյ ինքնուրոյն
գրել նախ 1 տող ունեցող, ապա՝ 2 տող ունեցող (հիւրա-
քանչիւր տողին վրայ՝ 2-3 բառ) չափածոյ (բանաստեղծա-
կան) տողեր:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Ինքնաթելադրութիւնը կը զարգացնէ երե-
խային յիշողութիւնը, պատասխանատու-
թիւնը, զանոնք կը դարձնէ պատասխա-
նատու:

Ինքնաթելադրութիւնը գրելէն առաջ երե-
խաները նախ պէտք է գրուելիք 1-2 նա-
խադասութիւնը սորվին գոց (անգիր),
ուշադիր ուսումնասիրեն նաեւ բառերուն
ուղղագրութիւնը, յետոյ իրենք իրենց
թելադրելով՝ գրի առնեն: Կարելի է նաեւ
իբրեւ ինքնաթելադրութեան նիւթ ընտրել
դասագիրքէն որեւէ բանաստեղծութեան
առաջին եւ երկրորդ տողերը: Այդ տողերը
կարելի է սորվիլ դասարանին մէջ, եւ
ուսուցիչի օգնութեամբ գրի առնել: Այնու-
հետեւ կարելի է յանձնարարել տունը գոց
գրել սորվիլ, ապա դասարանին մէջ գրել
տետրակներուն մէջ:

*ՅԻՇԵՆՔ. Ինքնաթելադրութիւնը թելադրութիւն գրելուն
նախապատրաստուելու փորձ մըն է: Երբ երեխաները կը*

սորվին իրենք իրենց թելադրելով գրել, յետագային թելադրութիւնը գրելը անելի դիրքին է անոնց համար:

4.5. ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ

Մինչեւ թելադրութիւն գրելը ուսուցչուհին պէտք է թելադրուելիք նիւթը ամբողջութեամբ ընթերցէ, որպէսզի երեխաները հասկնան, թէ ինչ պէտք է գրեն: Այնուհետեւ պէտք է կարդայ նախադասութիւնը, ապա միայն թելադրէ բառ առ բառ: Առաջին դասարանին կարելի է աշակերտներուն յուշել իրաքանչիւր նախադասութեան վերջը դրուելիք վերջակէտը:

Նախապէս հնչիւնային վերլուծութիւն կատարելէն յետոյ, սորվեցնել ուսուցիչի թելադրութեամբ գրել 1-2 բառ, ապա՝ 1-2 բառակապակցութիւն, իսկ մինչեւ տարեվերջ՝ 1-2 պարզ նախադասութիւն:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Գրաւորի նշուած բոլոր տեսակներն ալ ունին ուսուցողական նշանակութիւն՝ նպատակ: Այսինքն, առաջին դասարանին մէջ ասոնք կ'իրականացուին որպէս ուսուցողական վարժութիւններ: Անոնց նպատակը սորվեցնելն է, ոչ թէ ստուգելը, առաւել եւս՝ գնահատելը չէ:

ՅիճեՆՔ. Եթէ առաջին դասարանէն սկսեալ այս տեսակի պարզագոյն ուսուցողական աշխատանք չտարուի, ապա յետագայ դասարաններուն մէջ աշակերտները կը դժուարանան:

Գրաւորի տեսակներուն քանակը ըստ շաբաթների.

- Արտագրություններ (ընդօրինակություններ) - շաբաթը երկու անգամ
- Ինքնաթելադրություն - ամիսը անգամ մը
- Թելադրություն - բառային՝ շաբաթը անգամ մը (սկսեալ՝ 1 բառէ, տարեվերջին՝ 4-5 բառ),
- Բառակապակցություն՝ շաբաթը անգամ մը,
- Նախադասություն՝ երկու շաբաթը անգամ մը (միայն ենթակայով եւ ստորոգիչով կազմուած մէկ նախադասություն: Օրինակ՝ *Աշունը եկաւ*):

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Աշակերտը գիտէ հայոց այբուբենի բոլոր տառերուն անունները եւ վայելուչ կը գրէ այդ տառերը:
2. Ծանօթ բառերը, բառակապակցությունները եւ նախադասությունները կը գրէ ինչպէս արտայայտութեամբ, այնպէս ալ թելադրութեամբ՝ պահպանելով ուղղագրութեան պարզ կանոնները:
3. Կրնայ գոց (անգիր) սորվելէն ետք ինքնաթելադրութեամբ գրել 1-2 տող ունեցող 3-4 բառէ կազմուած չափածոյ տողեր (բանաստեղծական): Օրինակ՝ եկաւ աշուն, սիրուն, նախշուն:

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԷՔՆԵՐՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

1. Ձեւաորել մանկական խումբի մէջ համերաշխ ապրելու, տարեկիցներուն հետ համագործակցելու, անհրաժեշտութեան պարագային օգնելու եւ անոնցմէ օգնութիւն խնդրելու, սեփական կարիքներու մասին խօսելու, պատմելու որակներ:
2. Շրջապատին մէջ կատարուող իրադարձություններու քննարկումի ճամբով աշակերտներու մէջ ձեւաորել ապրումակցումի, նրբանկատութեան, հանդուրժողականութեան

որակներ:

3. Դաստիարակել ընտանիքին մէջ, դպրոցին մէջ, հասարակութեան մէջ դրուած կարգ ու կանոնին ենթարկուելու, ծնողներու, ուսուցիչներու, ասագներու կողմէն թելադրուած յանձնարարութիւնները յարգելու, գնահատելու եւ կատարելու կարողութիւններ:

4. Զարգացնել նուիրումի, հայրենիքի, անոր սրբութիւններու նկատմամբ սէր, աշխատասիրութիւն, հասարակական եւ անձնական պատասխանատուութիւն:

5. Ձեւաւորել ընտանիքի, դպրոցի, երկիրի նկատմամբ հոգածութիւն, նուիրում, յարգանք աշխատանքի եւ աշխատաւոր մարդոց նկատմամբ:

6. Ազգային տօներու, ամենօրեայ ծանաչումի, անոնց մասնակցութեան ճամբով ձեւաւորել հետաքրքրութիւն եւ սէր ազգային կեանքին, հայկական սովորութիւններու նկատմամբ, դնել հայու հոգեկերտուածքի կազմաւորումի հիմքերը:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Նշուած անձնային որակները եւ արժէքները կը ձեւաւորուին եւ կը զարգանան առաւելապէս դաս-դասարանային համակարգին մէջ իրականացուող աշխատանքներու, մասնաւորապէս մայրենիի դասագիրքերուն մէջ զետեղուած ստեղծագործութիւններու գաղափարներու, բարոյախրատական կողմի բժախնդիր բացայայտումի եւ անոնց շուրջ բազմաբնոյթ աշխատանքներու կատարումին ճամբով:

Բ.

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ



1. ԸՆԹԵՐՑՈՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ ԵՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ

1.1. ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

- Զարգացնել աչքի մէկ ընդգրկումով բառերը կարդալու, զանոնք նախադասութեան մէջ զիրար կապելու երեխաներուն կարողութիւնը:

- Ձեւաւորել ոչ ընդարձակ բնագիրը մէկ անգամ ինքնիւրոյն (միտքին մէջ կամ շշուկով) ընթերցուելէն յետոյ ծիշդ, հասկնալով եւ արտայայտիչ կարդալու կարողութիւն (ընթերցողական կարողութեան երկրորդ մակարդակ):

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Արտայայտիչ կարդալ կը նշանակէ կարդացած աստե՛ն ճշգրիտ ներկայացնել հեղինակին զգացումները, ապրումները, եւ նպատակները: Հասկնալ կը նշանակէ առողջանութեան նշաններուն ու ձայնային ելեւէջներու միջոցով ունկնդիրին ներկայացնել ստեղծագործութեան հերոսներու՝ գործող անձերուն կամ կերպարներուն բնաւորութեան գիծերը, վարքը:

ՉՄՈՌՆԱՆՔ. Որպէսզի աշակերտը արտայայտիչ կարդայ, ան առաջին հերթին պէտք է հասկնայ կարդացած ստեղծագործութեան մէջ կատարուող դէպքերը, երկխօսութիւնները, պէտք է ճանչնայ կերպար-

ներուն բնատրոփինը: Կը նշանակէ՝ աշակերտէն արտայայտիչ կարդալ պահանջելէն առաջ պէտք է՝

1. բնագիրին շուրջ աշխատանք տանիլ. երեխաներուն հետ միասին քննարկել ստեղծագործութեան բարոյախրատական կողմը՝ գլխաւոր միտքը, գաղափարը,

2. վերլուծել հերոսներուն վարքը, անոնց գործողութիւնները, արարքներու եւ տեղի ունեցած դէպքերու պատճառահետեւանքային կապերը,

3. դիտարկել (նախադասութիւն առ նախադասութիւն) առոգանութեան եւ կէտադրութեան նշանները եւ զանոնք ներկայացնելու արտայայտչամիջոցները:

ՅԻՇԵՆՔ. Երեխաներէն ոչ թէ պէտք է պահանջել արտայայտիչ կարդալ, այլ անհրաժեշտ է սորվեցնել այդպէս կարդալ:

- Զարգացնել եւ գրեթէ հմտութեան հասցնել **կը** եղանակիչը եւ օժանդակ բայերը բայերուն հետ միասին կարդալու երեխաներու կարողութիւնը:

- Զարգացնել ընթերցուած ստեղծագործութեան **հիմնական միտքը գաղափարը** ըմբռնելու, զայն քանի մը նախադասութեամբ ներկայացնելու եւ իր խօսքին մէջ *հիմնական միտք՝ գաղափար* բառերը գործածելու երեխաներու կարողութիւնները: Օրինակ՝ «Այս պատմուածքին հիմնական միտքը համախմբելու գաղափարն է: Եթէ թռչունները միասին չչուեն, անոնք կը կորսուին, կը փձանան ճամբու ընթացքին» («Ծիծեռնակներուն չուն», «Չորս եղանակ»):

- Կատարելագործել ինքնիրոյն կարդալու երեխաներուն կարողութիւնը եւ ձեւաւորել ինքնիրոյն կարդալէն յետոյ քանի մը նախադասութեամբ կարդացածին բովանդակութիւնը ներկայացնելու ունակութիւն:

- Հմտութեան մակարդակի հասցնել դասագիրքին ստեղծագործութիւնները **շարունակելով, հատուածա-**

բար (մեկնաբանելով), մեկնաբանելով, ընտրովի եւ դերերով կարդալու երեխաներու կարողութիւնը:

ՅԻՇԵՆՔ. Եթէ ստեղծագործութիւնը պէտք է դերերով ընթերցուի, հարկաւոր է ընտրովի ընթերցանութիւնը կազմակերպել գործող անձերուն խօսքերուն շուրջ: Օրինակ, քննարկենք «Ամպերը եւ ալիքները» պատմուածքը («Հայրենի Աշխարհ», Բ. գիրք) դերերով կարդալուն նախապատրաստելու աշխատանքի ընթացքը:

1. Եկէք պատմուածքի փոքրիկ հերոսին անուն տանք (Սուէ):

2. Ի՞նչ ըսած էին ամպերուն մէջ ապրողները փոքրիկ Անիին: Գտէք եւ կարդացէք այդ տողերը:

3. Իսկ ի՞նչ հարցուց Անին անոնց: Կարդացէք այդ տողերը: Յիշեցէք, որ Անին հարցում տուած էր, ուրեմն ինչպէ՞ս պէտք է ընթերցուի այդ նախադասութիւնը:

4. Ի՞նչ խաղի մասին պատմեց Անին մայրիկին. ինչպէ՞ս պէտք է կարդանք այդ տողերը:

• Զարգացնել կարդացած ստեղծագործութեան մէջ հանդիպած բառերուն իմաստները բովանդակութեան միջոցով կոահելու կարողութիւնը եւ այդ բառը բացատրել թեքսթին մէջ ունեցած իմաստով:

1.2 ՊԱՏՄԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

• Զարգացնել դիտած թեմաթիք նկարին, կարդացած ստեղծագործութիւններուն բովանդակութիւնը՝ ուսուցիչին հարցումներուն օգնութեամբ, իսկ տարեվերջին՝ առանց ուսուցիչի հարցումներուն պատմելու կարողութիւն:

• Մշակել կարդացած ստեղծագործութեան բովանդակութիւնը իբրեւ ականատես եւ մասնակից պատմելու տարրական կարողութիւն:

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՅՈՒՅՈՒՄ. Որպես ականատես աշակերտը կը պատմէ բայի երրորդ դէմքով (*կ'երթայ, կը տեսնէ, ըսին, յաղթեցին* եւայլն): Պատմող աշակերտը դէպքերը կը ներկայացնէ այնպէս, կարծես ինք քովէն (հեռուէն) դիտած է, թէ ինչ կատարուած է: Ասիկա պատմելու ամէնէն պարզ ձեւն է. աշակերտը կը պատմէ որպէս դիտորդ: Որպէս **մասնակից** աշակերտը կը պատմէ բայի առաջին դէմքով, այնպէս, կարծես ինք մասնակցած է ներկայացուած պատմութեան դէպքերուն, եղած է գործող անձերուն, հերոսներուն հետ միասին (*ես տեսայ, մենք փրկեցինք, մենք կը սաւառնէինք*, եւայլն): Պատմելու այս ձեւերը հետաքրքրաշարժ են եւ կը զարգացնեն աշակերտներուն երեւակայութիւնը:

• Սորվեցնել կարդացած ստեղծագործութեան համար կազմել ծրագիր (փլան)՝ նախագիծ, հարցական նախադասութիւններով (նախ ուսուցիչի օգնութեամբ, ապա՝ առանց ուսուցիչի օգնութեան), եւ պատմել ըստ իր կազմած ծրագիրին: Ծրագիրը (փլանը) կազմել համադասարանային եղանակով եւ գրել գրատախտակի վրայ:

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՅՈՒՅՈՒՄ. Երկրորդ դասարանցիներուն համար ամէնէն դիւրինը հարցական նախադասութիւններով նախագիծ կազմելն է եւ ըստ այդ նախագիծին պատմելը:

Օրինակ՝ «Քամին» («Չորս եղանակ», Ա. գիրք)

Նախագիծ.

1. Որո՞նք են քամիին զաւակները
2. Ինչպիսի՞ն է զեփիւրը:
3. Ինչի՞ն կը նմանի հովը:

- 4. Ինչե՞ր կ'ընէ քամին:
- 5. Ի՞նչ կը բերէ իր հետ քամին:

Նախագիծին հարցերուն մէջ պէտք է գործածուին այն բանալի բառերը, որոնք պատմած ժամանակ աշակերտը պէտք է պարտադիր գործածէ:

- Ձեւաւորել կարդացած ստեղծագործութեան այլ խորագիր մը դնելու կարողութիւն:

1.3 ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

• Երկու շաբաթը անգամ մը հայոց լեզուի ընթերցանութեան դասը նուիրել արտադասարանային ընթերցանութեան:

• Ձեւաւորել դասէն, դասագիրքէն դուրս փոքրիկ ստեղծագործութիւններ, հետաքրքրաշարժ նիւթեր, մանկական ամսագիրեր ընթերցելու եւ կարդացածին շուրջ դասընկերներուն պատմելու կարողութիւն:


• Սորվեցնել գիրքէն օգտուելու մշակոյթ, կարդալ գիրքին հեղինակին անունը, խորագիրը, օգտուիլ ամսաթերթերէն, նկարներով ճանչնալ յայտնի մանկագիրները:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՁԻ ՀԱՄԱՐ

1. Աշակերտը կը կարդայ ճիշդ, հասկնալով եւ արտայայտիչ:

2. Կը հասկնայ կարդացածը եւ ուսուցիչին հարցումներուն օգնութեամբ կրնայ որոշել ստեղծագործութեան հիմնական միտքը՝ գաղափարը:

3. Կրնայ պատմել իր ընթերցած պատմուածքին, հեքիաթին, առակին բովանդակութիւնը՝ ուսուցիչին հար-



ցումներուն օգնութեամբ:

4. Կը յիշէ իր կարդացած ստեղծագործութիւններուն հեղինակներուն եւ գործող անձերուն՝ կերպարներուն անունները եւ կը կատարէ պարզ վերլուծական համեմատութիւններ:

5. Կ'որոշէ ստեղծագործութեան՝ իրեն անձանօթ բառերը, ունի զանոնք ինքնիւրոյն (կռահումի ձամբով) բացատրելու պարզ կարողութիւն:

6. Կրնայ օգտուիլ մանկական գրականութենէն, ուսուցիչին յանձնարարութեամբ կ'ընտրէ անհրաժեշտ գիրքը, ամսագիրը, զանոնք կրնայ կարդալ եւ հակիրճ ներկայացնել դասարանին մէջ:

2. ԽՕՍՔ ԵՒ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

2.1. ԲԱՌԱՄԹԵՐՔԻ ՀԱՐՍԱՑՈՒՄ

- Շարունակել ամրակայել առաջին դասարանին մէջ աշակերտի ձեռք բերած բառամթերքը՝ անընդհատ կրկնութեան ճամբով:

- Բառամթերքը հարստացնել նոր բառերով՝ հիմք ընդունելով ոչ միայն դասագիրքին ստեղծագործութիւններուն մէջ գործածուած նոր բառերը, այլեւ սորվեցնել հասարակական, ընկերային, ազգային երեւոյթներ ներկայացնող բառեր եւ արտայայտութիւններ:

- Զարգացնել նորածանօթ (նոր սորված) բառերը խօսքին մէջ գործածելու աշակերտներու կարողութիւնը՝ երեխաներուն սորվեցնելով այդ բառերը գործածել ոչ միայն նախադասութիւններու մէջ, այլեւ **կապակցուած խօսքին մէջ**:

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ. Կապակցուած կը կոչուի խօսքը, երբ անոր մէջ մտնող նախադասութիւնները միաւորուած են մէկ միտքի շուրջ՝ փոխ-կապուած են տրամաբանական ընթացքով մը: Կապակցուած խօսքը ունի սկիզբ, բուն բովանդակութիւն եւ ամփոփիչ ասարտ: Ուրեմն, նորածանօթ բառերը գործածել կապակցուած խօսքին մէջ կը նշանակէ զանոնք գործածել ոչ միայն ուսուցիչի յանձնարարութեամբ կազմուած նախադասութիւններուն մէջ, այլեւ պատումներու, առօրեայ խօսքի, շարադրութիւններու, փոխադրութիւններու մէջ:

ՉՄՈՌՆԱՆՔ. Իրաքանչիւր կապակցուած խօսք պէտք է ունենայ խորագիր:

• Կատարելագործել քաղաքավարական բառեր եւ արտայայտություններ գործածելու երեխաներու կարողությունը, զանոնք դարձնել ամէնօրեայ աշխատանքի նպատակ (շնորհակալություն, բարի եղէք, հաճեցէք, սիրով, հաճոյքով, բարեւ Ձեզ, բարի երեկոյ, ցոտեսություն, մինչեւ նոր հանդիպում, եւայլն):

2.2. ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶԵՒԱԽՈՐՈՒՄ

• Իրադրային վարժություններու, խաղերու կազմակերպումի ճամբով եւ դասագիրքին մէջ զետեղուած, արտադասարանային ընթերցանութեան նիւթերու ընթերցումի եւ զանոնք վերլուծելու ճամբով երեխաները մղել խօսակցութեան, երկխօսութեան մէջ մտնելու, հաղորդակցելու:

• Կատարելութեան հասցնել մեծերուն եւ անծանօթներուն հետ *Դուք, Ձեր, Ձեզ* յոգնակի դերանուններով դիմելու, ամբողջական նախադասութիւններով, որոշակի ձայնային բարձրութեամբ խօսելու երեխային կարողութիւնները:

• Ձեաւորել տարիքին յարմար թեմաներով տարեկիցներու եւ մեծերուն հետ (թոյլտուութիւն խնդրելէն յետոյ) խօսակցութեան բռնուելու, սեփական կարծիքը յայտնելու, զայն հիմնաւորելու, դատողութիւններ ընելու, որեւէ դէպքի առիթով քննարկումներ իրականացնելու պարզ կարողութիւն:

• Խթանել երեխաներուն խօսակցութիւն վարելու ձգտումը՝ խօսեցնելով զանոնք ամէն առիթով:

• Երեխաներուն սորվեցնել խօսքին մէջ գործածել հարցական, բացազանչական նախադասութիւններ:

• Ձեաւորել իրարու եւ ուսուցիչին հետ համեմատաբար ընդարձակ թեքսթով խօսելու ունակութիւն՝ գործածելով նաեւ դատողական բովանդակութիւն ունեցող նախադասութիւններով:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Աշակերտը կրնայ վերարտադրել իր կարդացած ստեղծագործության բովանդակությունը, դասարանային աշխատանքէն յետոյ իր կարդացածը կը պատմէ՝ գործածելով նորածանօթ եւ բանալի բառերը:

2. Կրնայ որոշել, թէ ինչ կը սորվեցնէ իր կարդացած ստեղծագործությունը, այսինքն՝ հիմնական միտքը՝ գաղափարը: Այդ կապակցութեամբ միտքեր կը ձեւաւորէ եւ կ'արտայայտէ իր դատողութիւնները՝ քանի մը միտքերով իրարու հետ կապուած նախադասութիւններով:

3. Ունի անհրաժեշտ բառամթերք, խօսքային գործունէութեան նրբերանգներ կը գործածէ (հարցական, բացականչական նախադասութիւններ), կրնայ ազատ արտայայտել իր միտքերը, կարծիքը, կը հիմնաւորէ եւ կը պատճառաբանէ ու կը պաշտպանէ զանոնք:

4. Տրուած բառերը կրնայ գործածել նախադասութիւններուն եւ խօսքին մէջ, խօսած ժամանակ կը գործածէ *որ, որովհետեւ, քանի որ, ատոր համար* եւ նմանօրինակ այլ բառեր եւ շաղկապներ:

3. ԼԵԶՈՒԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՑՈՒՄ

3.1. ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ. ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ

- Գաղափար տալ հոմանիշ եւ հականիշ բառերուն մասին: Ձեւաւորել տրուած բառերուն հոմանիշները եւ հականիշները որոշելու եւ խօսքին մէջ զանոնք գործածելու կարողութիւն:

- Սորվեցնել նոյնարմատ բառերուն մէջ ընդհանուր մասը գտնել եւ այդ հիմքին վրայ գաղափար ձեւաւորել արմատին մասին:

- Ձեւաւորել եւ զարգացնել տրուած արմատով նոր բառեր կազմելու (նոյնարմատ), բառախումբին բառերը ըստ նոյնարմատութեան դասդասելու (խմբաւորելու) պարզ կարողութիւն:

- Ամբողջացնել բառը որպէս իմաստ արտայայտող տառերու խումբ ըմբռնումը եւ ապա՝ կանոնի իրացումը:

- Գործնական ճամբով ձեւաւորել միավանկ եւ բազմավանկ բառերը տարբերելու, դասդասելու, միավանկ բառը բազմավանկ դարձնելու (օրինակ՝ *տուն-տնակ, ջուր-ջրալի, մուկ-մուկեր*) պարզ կարողութիւններ:

- Ամրապնդել ճայնաւոր եւ բաղաձայն հնչիւնները տարբերակելու մասին երեխաներուն կարողութիւնը:

- Գաղափար տալ՝ ճայնաւորի վանկ կազմելու, (վանկարար հնչիւն-տառ) վանկարման սկզբունքով տողադարձի մասին: Ձեւաւորել բառը վանկատելու հմտութիւն:

3.2. ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

- Զարգացնել եւ հմտութեան մակարդակի հասցնել առաջարկուած բառերը նախադասութեան մէջ գործածելու, տրուած պարզ նախադասութիւնը ընդարձակելու երեխաներու կարողութիւնները (օրինակ, *թռչունները չուեցին: Թռչունները չուեցին հարաւ: Մեր բակի թռչունները չուեցին հարաւ*):

- Ձեւաւորել նախադասութեան մասին գաղափար՝ որպէս բառերու խումբ, որ կ'արտայայտէ **ամփոփ միտք**:

- Հմտութեան մակարդակի հասցնել նախադասութիւնը գլխազիրով գրելու եւ վերջը վերջակէտ դնելու երեխաներու կարողութիւնները:

- Սորվեցնել գծել նախադասութիւններուն կաղապարները եւ ըստ կաղապարի նախադասութիւն կազմելը:

- Զարգացնել նկարի շուրջ նախադասութիւններ կազմելու, սեփական միտքերը ամբողջական՝ ասարտուն միտքերով՝ ամփոփ, արտայայտելու երեխաներու կարողութիւնները:

3.3. ՁԵՒԱԲԱՆԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ա) Գաղափար տալ գոյականի՝ որպէս առարկայ, իր ցոյց տուող բառի մասին:

- Ձեւաւորել գոյականին ձիշղ հարցումներ տալու եւ ըստ հարցի **անձ** եւ **իր** գոյական ցոյց տուող գոյականները տարբերակելու կարողութիւն (նվ-ուսուցիչ, ովքեր-աշակերտներ, ինչ-գրիչ, ինչեր-ծառեր, ինչ-առիծ, ինչեր-ծիծեռնակներ, եւ այլն):

- Գոյականի թիւ. եզակի, յոգնակի, անոնց տրուող հարցերը (*ինչ-ինչեր, ով-ովքեր*, եւ այլն): Ձեւաւորել եզակի թիով գոյականները՝ յոգնակի, յոգնակին եզակի դարձ-

նելու կարողություններ:

- Գործնական ճամբով (նախադասություններու մէջ նոյն բառը փոփոխելով) գաղափար տալ գոյականի **հոլովումին** մասին՝ որպէս նախադասութեան մէջ անոր փոփոխութիւն:

- Գաղափար *ս, դ, ն, ը* յօդերու մասին՝ որպէս տառերու, որոնք դրուելով բառերուն վերջը ցոյց կու տան, թէ առարկան, իրը որու կը պատկանի (օրինակ՝ *իմ գիրքս, քու մայրդ*, եւայլն):

- Ամրակայել եւ զարգացնել գոյականի՝ յատուկ եւ հասարակ անուններուն մասին աշակերտներուն ունեցած գիտելիքները եւ կարողութիւնները՝ ընդլայնելով անոնց շրջանակը (քաղաքներու, լեռներու, սարերու, գետերու անունները՝ որպէս յատուկ անունի տեսակներ):

բ) Գաղափար տալ բային մասին, որպէս առարկային կատարած գործողութիւնը ցոյց տուող բառ: Ձեւաւորել հարցերու միջոցով նախադասութեան մէջ գործածուած բայերը որոշելու կարողութիւն (*ի՞նչ ընել, ի՞նչ կ'ընէ, ի՞նչ ըրաւ, ի՞նչ եղաւ*, եւայլն):

Գաղափար տալ բայի երեք դէմքերուն մասին՝ Ա. դէմք, Բ. դէմք եւ Գ. դէմք: Ձեւաւորել բայերը ըստ դէմքի փոփոխելու պարզ ունակութիւն եւ նախադասութեան մէջ գործածուած բային դէմքը հարցերու միջոցաւ որոշելու կարողութիւն:

- Ձեւաւորել բայը եզակի եւ յոգնակի թիով գործածելու կարողութիւն եւ նախադասութեան մէջ գործածուած բայերուն թիւը հարցերու միջոցաւ որոշելու պարզ մակարդակի կարողութիւն:

- Պարզ, մատչելի գաղափարի ձեւաւորում բայի լծորդութեան մասին: Գործնական կարողութեան ձեւաւորում **ել, իլ, ալ** վերջաւորութիւններու միջոցաւ բայերուն լծորդութիւնը տարբերակելու ուղղութեամբ (*գրել, յոգնիլ, խօ-*

սիլ, կարդալ, հեռանալ, խաղալ, եւայլն):

• Գործնական վարժութիւններու ճամբով պարզ գաղափար ձեւաւորել բայի երեք ժամանակներու մասին (ներկայ, անցեալ, ապառնի)՝ գործածելով համապատասխան հարցադրումը, բային հետ մասին (*Ե՞րբ կը գծես, ե՞րբ գծեցի, երբ պիտի գծես*, եւայլ):

գ) Գաղափար տալ ածականին մասին՝ որպէս առարկայի յատկանիշ ցոյց տուող բառ:

Ձեւաւորել նախադասութեան մէջ գործածուած ածականները **ինչպիսի** հարցումով որոշելու կարողութիւն:

ՅԻՇԵՆՔ. Ածականը որոշելու համար ինչպիսի՞ հարցումը պէտք է տալ համապատասխան գոյականին հետ միասին (օրինակ՝ ինչպիսի՞ անձրեւ - յորդառատ, ինչպիսի՞ ծաղիկներ - անուշաբոյր, եւայլն):

4. ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՅՈՒՅՈՒՄ Ուղղագրութեան ուղղութեամբ աշխատանք պէտք է տանիլ իւրաքանչիւր հայոց լեզուի դասաժամին՝ երեխաներուն ուշադրութիւնը առաջին հերթին կեդրոնացնելով դասագիրքին ստեղծագործութիւններուն մէջ հանդիպած ուղղագրական արժէք ունեցող բառերուն վրայ:

ՅԻՇԵՆՔ. Բառերուն ուղղագրութիւնը աշակերտները մէկ անգամէն կամ քանի մը օրուան ընթացքին չեն սորվիր, եւ անհմաստ է օրուայ մը ընթացքին բազմաթիւ բառերու ուսուցումը, առաւել եւս՝ նոյն օրը բազմիցս գրել տալը: Շահեկան է իւրաքանչիւր անգամ կանգ առնել բառերու փոքր խումբի մը վրայ (3-4 բառ) եւ անոնց ուղղութեամբ կատարել բազմաբնոյթ վարժութիւններ:

- Ամրակայել եւ զարգացնել առաջին դասարանին մէջ աշակերտներու ձեռք բերած ուղղագրական կարողութիւնները:

- Գործնական վարժութիւններու եւ անընդհատ գրաւոր կրկնութիւններու միջոցաւ սորվեցնել *է/ե-ի*, *օ/ո-ի* եւ *ւ/վ-ի* ուղղագրութիւնը:

- Աշակերտներու միջոցաւ (ուսուցիչի անմիջական մասնակցութեամբ եւ ղեկավարութեամբ) ստեղծել ուղղագրական արժէք ներկայացնող պաստառներ եւ մշտապէս զանոնք ցուցադրել դասարանին պատերուն:

4.1. ՀՆՉԻՒՆԱՓՈՒՈՒԹԻՒՆ, ՀՆՉԻՒՆԱՓՈՒՈՒԱԾ ԲԱՌԵՐՈՒ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

• Ձեռատրել եւ ամրակայել ու-ի եւ ոյ-ի հնչիւնափոխուած ձեւերը ճիշդ գրելու կարողութիւն եւ անոնց հնչիւնափոխութեան մասին պարզ գաղափար:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՁԻ ՀԱՄԱՐ

1. Աշակերտը կրնայ ըսել տարւոյն մէջ սորված բառերու հոմանիշները եւ հականիշները:

2. Կրնայ տարբերել միավանկ եւ բազմավանկ բառերը, վերջիններս կը բաժնէ վանկերու եւ կը տողադարձէ:

3. Գիտէ, որ նախադասութիւնը կ'արտայատէ ամփոփ միտք: Անիկա կը սկսի գրել գլխագիրով եւ վերջը կը դնէ վերջակէտ: Կրնայ տրուած բառը գործածել նախադասութեան մէջ:

4. Գիտէ գոյականին՝ որպէս առարկայ ցոյց տուող բառի հարցումները, անոնց օգնութեամբ կ'որոշէ գոյականները: Գոյականը ճիշդ կը փոփոխէ նախադասութեան մէջ: Կը տարբերէ յոգնակի եւ եզակի թիւերով դրուած, ինչպէս նաեւ անձ եւ իր ցոյց տուող, յատուկ եւ հասարակ գոյականները:

5. Հարցումներու միջոցաւ կ'որոշէ նախադասութեան մէջ գործածուած բայերը, կ'որոշէ անոնց դէմքը, ժամանակը եւ թիւը: Կրնայ գոյականը եւ բայը գործածել միասին ճիշդ թիւով եւ դէմքով:

6. Հարցումի օգնութեամբ կ'որոշէ նախադասութեան մէջ գործածուած ածական անունները, կրնայ մէկ գոյականին համար ըսել բազմակի ածականներ:

7. Ողջ ուսումնական տարւան ընթացքին սորված ուղղագրական արժէք ներկայացնող բառերը *է-ե, օ-ո, ւ-վ* եւ *ու-ի, ոյ-ի* հնչիւնափոխութեամբ պայմանաւորուած բառաձեւերը կը գրէ ճիշդ, ինչպէս ընդօրինակած ատեն, այնպէս ալ թելադրութեան ժամանակ:

5. ԳՐԱՒՈՐ ԽՕՍՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

5.1. ՎԱՅԵԼՈՒՉ ԳՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ

- Շարունակել աշխատանքը գեղեցիկ՝ վայելուչ գրելու կարողութեան ձեւաւորման ուղղութեամբ՝ հաշուի առնելով հայերէնի տառերուն չորս տեղադրութիւնները:

- Գրաւոր խօսքը (աշխատանքը) գնահատած ժամանակ կարելորել նաեւ աշակերտին ձեռագիրը՝ վատ ձեռագիրի կամ անփոյթ գրելու համար գնահատանիշէն հանելով 1 միաւոր:

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ. Հայերէնի տառերը ունին տողին նկատմամբ չորս դիրքեր:

Առաջին դիրքին տառերը կը գրուին տողին վրայ եւ ունին մէկ դիրքի մասնիկներ՝ մինչեւ օժանդակ գիծը.
ա, օ, ս, ո, ռ, ու

Երկրորդ տեղադրութեան տառերը մասնիկներ ունին, ինչպէս հիմնական տողին վրայ, այնպէս ալ՝ օժանդակ գիծէն վեր.

Ո, Չ, Ը, Ե, Ա, Ս, Օ, Ե, Փ, Ժ, Ծ, Ի, Հ, Ճ, Մ, Ն

Երրորդ տեղադրութեան տառերն են.

Ղ, Լ, Չ, Ր, Թ, Մ, Բ, Ղ, Գ, Թ, Ճ, Ղ, Ե, Զ, Գ

Չորրորդ տեղադրութեան տառերն են.

Բ, Դ, Ք, Ք, Գ, Է, Թ, Ի, Ի, Խ, Խ, Կ, Կ, Փ, փ, Ֆ

Անհրաժեշտ է պահպանել տառերու գրութեան այս չորս տեղադրութիւնը:

5.2. ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒԹԻՒՆ

- Կատարելագործել եւ հմտութեան մակարդակի հասցնել դասագիրքէն եւ գրատախտակէն ընդօրինակելու երեխաներուն կարողութիւնը:

- Նկատի ունենալով, որ ուղղագրական կարողութիւններու ամրակայման եւ լեզուական գիտելիքներու ձեռքբերումի գործին մէջ ամէնէն արդիւնաւէտը ստեղծագործական ընդօրինակութիւններն են, աստիճանաբար գերակայութիւնը տալ ընդօրինակութեան այդ տեսակին:

5.3. ԻՆՔՆԱԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ

- Կատարելագործել ինքնաթելադրութիւն գրելու կարողութիւնը՝ զայն համարելով թելադրութիւն գրելու կարողութեան նախապատրաստումի կարեւոր ուղի:

- Ինքնաթելադրութեան ծաւալը մեծցնել՝ մինչեւ տարեվերջ զայն հասցնելով 4 տողի (մէկ քառատող՝ բանաստեղծութեան մէկ տուն):

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՅՈՒՅՈՒՄ. Իբրեւ ինքնաթելադրութեան նիւթ կարելի է նախատեսել դասագիրքին մէջ զետեղուած պարզ բանաստեղծական տողերը, որոնք երեխաները զոց սորված են:

5.4. ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ

- Զարգացնել 2-3 նախադասութիւն ուսուցիչի թելադրութեամբ գրելու երեխաներու կարողութիւնը՝ բնագիրը յագեցնելով սորված 3-4 ուղղագրական արժէք ունեցող բառերով: Ամբողջ թեքսթին բառաքանակը տարեսկիզբը՝ 7-10 բառ, իսկ տարեվերջին՝ 13-15 բառ:

- Թելադրություններ գրելու կարողության զարգացումին համար երկու շաբաթը անգամ մը գրել ուսուցողական թելադրություն (1-2 նախադասություն):

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՅՈՒՅՈՒՄ. Ուսուցողական թելադրության նպատակը երեխաներուն թելադրություն գրել ուսուցանելն է: Այս գործընթացը կ'իրականացուի հանգրուան առ հանգրուան:

Առաջին՝ Կարդալ թելադրության բնագիրը (սկիզբը՝ 2-3 նախադասություն):

2րդ՝ Ուղղագրական արժէք ներկայացնող բառերու բացատրություն, համարժէք օրէնք-կանոնի վերլիշում:

3րդ՝ Առաջին նախադասութեան դանդաղ ընթերցում ունկնդրումի համար:

4րդ՝ Նախադասութեան թելադրում բառ առ բառ:

5րդ՝ Առաջին նախադասութեան ամբողջական ընթերցում. աշակերտները կը ստուգեն իրենց գրածը:

6րդ՝ Երկրորդ նախադասութեան ընթերցում ունկնդրումի համար:

7րդ՝ Նախադասութեան թելադրում բառ առ բառ:

8րդ՝ Երկրորդ նախադասութեան ամբողջական ընթերցում. աշակերտները կը ստուգեն իրենց գրածը:

- Ուսուցողական գրաւորները կրնան ստուգել իրենք՝ աշակերտները՝ իրենց գրածը համեմատելով գրատախտակին վրայ գրուածին հետ եւ կարմիր գրիչով շտկելով իրենց սխալները:

- Իրաքանչիւր եռամսեան անգամ մը կարելի է գրել ստուգողական **թելադրություն**, որուն նպատակը երեք ամսուան ընթացքին երեխաներուն սորված ուղղագրական արժէք ունեցող բառերուն իրացումի եւ զանոնք թելադրութեամբ գրելու կարողութեան մակարդակի ստուգումն է:

Ստուգողական թելադրությունը կ'իրականացուի նույն մեթոտաձեւով, միայն այս պարագային, ուսուցիչը որեւէ բացատրութիւն, օգնութիւն չի ցուցաբերեր:

ՅԻՇԵՆՔ. Ուսուցողական թելադրությունը չի գնահատուիր, իսկ ստուգողական թելադրությունը կը գնահատուի:

5.5. ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ

- Փոխադրությունը ունկնդրած պատմութեան բովանդակութեան գրաւոր վերարտադրութիւնն է: Փոխադրությունը գրաւորի այն տեսակն է, որ կը նախապատրաստէ շարադրութիւն գրելու կարողութեան ձեւաւորումին:

- Ունկնդրած նիւթը կարելի է գրաւոր փոխադրել միայն ուսուցիչի բժախնդիր աշխատանքէն՝ նախապատրաստումէն յետոյ:

- Աշակերտներուն սորվեցնել փոխադրութեամբ գրել նախ դասագիրքին մէջ գետեղուած փոքրածաւալ ստեղծագործութեան բովանդակութիւնը՝ ստեղծագործութիւնը պատմելէն, բառերը բացատրելէն յետոյ:

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ. Փոխադրությունը պէտք է տրուի միայն ուսուցողական նպատակով: Այսինքն, անհկա երկրորդ դասարանին մէջ պէտք չէ գնահատուի: Եթէ փոխադրութիւն գրել երեխաները չսորվին, անոնք յաջորդ դասարաններուն մէջ դժուարութեամբ կը սորվին շարադրութիւն գրել:

- Ձեւաւորել ուսուցիչի ընթերցած անձանօթ նիւթը նախապատրաստական աշխատանքէն յետոյ յիշողութեամբ վերարտադրելու կարողութիւն:

ՅԻՇԵՆՔ. Երկրորդ դասարանին մէջ փոխադրութեան նիւթը պէտք է ըլլայ երեխաներուն ծանօթ դէպքի մը կամ ծանօթ երեսոյթի մը մասին: Այսինքն, անհկա պէտք է հերոսի մը կամ դէպքի մը մասին ըլլայ եւ ունենայ երեխաներուն ծանօթ բառամթերք՝ թէ՛ իմաստի, թէ՛ ուղղագրական իմաստներով:

Օրինակ, ներկայացնենք բնագիր մը.

Աշուն

Ուշ աշուն է: Օրերը կը ցրտին: Ծիծեռնակները կը չուեն տաք երկիրներ: Գարնան անոնք կը վերադառնան: (16 բառ):

Ինչպէս կը տեսնենք, փոխադրութիւնը խորագիր ունի, եւ անհկա կը հաշուուի բառերուն քանակին մէջ: Այդ քանակին մէջ կը մտնեն նաեւ օժանդակ բայերը: Կը կարելորենք նշելու, որ նիւթը ուսուցիչը պէտք է կարգայ երկու անգամ՝ դանդաղ, արտայայտիչ ելեւէջներով: Բոլորովին պարտադիր չէ, որ նիւթին 15 բառերն ալ ամբողջութեամբ աշակերտը գործածէ: Ան կրնայ պակաս բառեր գործածել, փոխել զանոնք կամ աւելցնել: Կարելորը ընդհանուր մտքին **փոխադրումն է:**

Միաժամանակ, չմոռնանք, որ պէտք է խրախուսուի, քաջալերուի, երբ երեխան գործածած է նոր բառեր եւ տեղին գործածած է զանոնք:

Փոխադրութեան ընթացքը.

Առաջին՝ Բնագրի հանդարտ ընթերցում (երկու անգամ):

2րդ՝ Հարցումներուն կազմումը եւ անոնց բանաւոր պատասխաններուն քննարկում:

Յրդ՝ Հարցաշարին կազմումը (ծրագրում, նախագծում), գրառում գրատախտակին վրայ՝ իւրաքանչիւր հարցումին շուրջ բանալի բառերու նշում:

Հարցաշարի նմոյշ մը՝

ԱՇՈՒՆ

- | | |
|-------------------------------------|---------------------|
| 1. Տարուան ձր եղանակն է: | <i>Ուշ աշուն</i> |
| 2. Ինչպէ՞ս են օրերը: | <i>ցուրտ, խոնաւ</i> |
| 3. Ո՞ր կը չուեն ծիծեռնակները: | <i>տաք երկիրներ</i> |
| 4. Ծիծեռնակները ե՞րբ կը վերադառնան: | <i>գարնան</i> |

4րդ՝ Հարցաշարին օգնութեամբ բնագրի համադասարանային պատմում:

5րդ՝ Բառերուն ուղղագրութեան շուրջ աշխատանք:

6րդ՝ Փոխադրութեան գրառում:

7րդ՝ Ինքնաստուգում:

8րդ՝ Տետրակներու յանձնում:

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ. Երկրորդ դասարանին մէջ իւրաքանչիւր փոխադրութիւն պէտք է գրուի այս ընթացքով: Ի դէպ, վերը ներկայացուած հարցաշարը պէտք է մնայ գրատախտակի վրայ մինչեւ փոխադրութեան աւարտը:

ՉՄՈՒՆԱՆՔ. Փոխադրութիւնը ուսուցողական աշխատանք է՝ վարժութիւն, որը կ'ուղղուի (կը սրբագրուի), բայց նիշերով չի գնահատուիր: Աշակերտի փոխադրութիւն գրելու կարողութեան մակարդակը հաշուի կ'առնուի հայոց լեզուի ընդհանուր նիշին մէջ:

Գրատրոններու տեսակների քանակը ըստ շաբաթներու.

- Արտագրութիւն - գրեթէ միշտ կ'իրականացուի:
- Ինքնաթելադրութիւն - ամիսը անգամ մը:
- Թելադրութիւն - ուսուցողական՝ 3-4 շաբաթը անգամ մը, ստուգողական՝ եռամսեակը անգամ մը:
- Փոխադրութիւն - երկու ամիսը անգամ մը:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Աշակերտը կրնայ արտագրել ինչպէս գրատախտակի վրայէն, այնպէս ալ դասագիրքէն: Կը հասկնայ տրուած առաջադրանքը, ինքնուրոյն կ'որոշէ իր ընելիքը եւ կը կատարէ ինչպէս **ընդօրինակումի**, այնպէս ալ **ստեղծագործական** արտագրութիւններ:

2. Կրնայ նախապատրաստական աշխատանքէն յետոյ գրել 13-15 բառերէ կազմուած **թելադրութիւն**, որուն մէջ կան տարուան ընթացքին սորված ուղղագրական արժէքներկայացնող 3-4 բառեր:

3. Տունը սորված բանաստեղծութեան մէկ տունը կամ որեւէ չափածոյ քառատող կրնայ գրել **ինքնաթելադրութեամբ**՝ պահպանելով նոր տողերը եւ կէտադրութիւնը:

4. Համապատասխան նախապատրաստութենէն յետոյ կրնայ գրաւոր վերարտադրել 13-15 բառեր ունեցող փոքրիկ պատմութեան բովանդակութիւնը՝ օգտուելով գրատախտակին վրայ գրուած ծրագիրէն (փլանէն) եւ բանալի բառերէն:

6. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԷՔՆԵՐՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

• Շարունակել առաջին դասարանին մէջ սկսած աշխատանքը ազգային եւ համամարդկային արժէքներու

զարգացման ուղղությամբ:

- Զարգացնել ինքնիւրոյն մտածողութիւն դըրսետորելու, սեփական գաղափարները խօսքով ներկայացնելու կարողութիւն:

- Գաղափար ձեւաւորել հայ ժողովուրդի ազգային արժէքներու, անոնց պահպանումի եւ փոխանցումի կարելիութեան մասին: Դասագիրքին մէջ զետեղուած ստեղծագործութիւններու հիմնական միտքի՝ գաղափարի բացայայտումի ճամբով եւ իւրաքանչիւր պատեհ առիթով ներկայացնել հայ ժողովուրդի ազգային արժէքները՝ սեփական լեզուի պաշտամունք, յարգանք ընտանիքին, ծնողներուն նկատմամբ, կրօնի եւ հաւատքի՝ քրիստոնէութեան գնահատումի կարելիութեան գիտակցում, հոգածութիւն, երեխաներու բարձրարժէքութիւնը ծնողներու եւ ազգի նկատմամբ, կրթութեան, մասնաւորապէս հայեցի կրթութեան կարելիութեան գիտակցում, հիւրասիրութիւն, յարգանք այլ ազգերուն նկատմամբ, եւայլն:


- Ազգային տօներուն, քրիստոնէական ծիսակատարութիւններու բովանդակութեան ըմբռնում եւ անոնց ընդունում որպէս ազգապահպան առաջնահերթութիւն:

- Ձեւաւորել ընկերասիրութիւն, փոխ օգնութեան, հանդուրժողականութեան, համախմբուածութեան որակներ՝ զանոնք դիտարկելով ազգապահպան, հայրենասիրական տեսանկիւններէն:

ԶԱՓՈՐՈՇԻԶԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Աշակերտը կը գիտակցի իր ազգային պատկանելիութիւնը, կը հասկնայ, որ ազգապահպանումի կարելի գործօններ են մայրենի լեզուն եւ կրօնը:

2. Ունի մեծերուն նկատմամբ յարգանք, փոքրերուն նկատմամբ հոգատարութիւն, կ'ապրումակցի ընկերներուն եւ անհրաժեշտութեան պարագային անոնց կ'օգնէ:



3. Դասարանային ընկերախումբին մէջ կը համագործակցի բոլորին հետ, ունի մտերիմ ընկերներ, անքէն է, անոխակալ:


4. Գիտէ ամենատարածուած տօները, անոնց պատմութիւնը եւ կազմակերպումին ձեւերը համայնքին մէջ, կը մասնակցի իր ուժերուն սահմաններուն մէջ:

5. Գիտէ իր կրօնական պատկանելիութեան եւ պարտականութիւններու մասին:

6. Կը հետաքրքրուի դպրոցի կեանքով, կը պահպանէ դպրոցական գոյքը, ունի հասարակական աշխոյժ դիրքորոշում:

Գ.

ԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ



1. ԸՆԹԵՐՑՈՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԵԱ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ ԵՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ

1.1. ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

- Զարգացնել ծանօթ եւ անծանօթ ստեղծագործութիւնները ճիշդ, հասկնալով, արտայայտիչ եւ սահուն կարգալու երեխաներու կարողութիւնը (կարգալու կարողութեան երրորդ մակարդակ):

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Աշակերտը սահուն կը կարդայ, երբ դասագիրքին մէջ զետեղուած որեւէ ստեղծագործութիւն 1-2 անգամ ընթերցուելէն յետոյ կրնայ կարդալ առանց անհարկի դադարներու, առանց կմկմալու, չկրկնելով կարդացած բառերը կամ անոնց առանձին վերջաւորութիւնները: Սահուն կարդալը կարդալու համեմատաբար բարձր մակարդակ է, երբ աշակերտը կ'ընթերցէ ոչ միայն ճիշդ, հասկնալով, արտայայտիչ նախապէս կարդացած ստեղծագործութիւնը, այլեւ այն անծանօթ բնագիրը, որուն բառերը իրեն ծանօթ են կամ անոնց հանդիպած է նախապէս կարդացած այլ ստեղծագործութիւններու մէջ:

ՉՄՈՒՆԱՆՔ. Անհարկի դադար թոյլ չտալ կը նշանակէ, որ աշակերտը կարդացած ատեն դադարներ ան-

շուշտ պէտք է ընէ՝ հիմք ընդունելով կէտադրական նշանները: Գոյութիւն ունի նաեւ տրամաբանական դադար հասկացութիւնը, որ եւս պէտք է պահպանել, թէեւ այդ պարագային դադար պահանջող բառերուն միջեւ որեւէ կէտադրական նշան դրուած չըլլար: Օրինակ՝

Ախր (դադար) ես ինչպէ՞ս (դադար) վեր կենամ, զնամ:

Ախր (դադար) առանց քեզ (դադար) ես ինչպէ՞ս մնամ:

Այս դադարները տրամաբանական են: Ընթերցողը այս դադարները պէտք է թոյլ տայ՝ ընդգծելու համար գալիք բառերը, իր մտքին հանդիսաւորութիւն տալու համար:

• Բացառել օժանդակ բայերը, **կը** եւ **մը** մասնիկներու բառերէն անջատ կարդալը:

1.2 ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՐՁ ԵԶՐԱԲԱՌԵՐՈՒ ԻԻՐԱՅՈՒՄ

• Զարգացնել կարդացած ստեղծագործութեան հիմնական միտքը՝ գաղափարը, հասկնալու, զայն 1-2 նախադասութիւններով ներկայացնելու երեխաներուն կարողութիւնները:

• Ձեւաւորել կարդացած ստեղծագործութեան գործող կերպարները որոշելու, անոնց դրական եւ բացասական նկարագիրը հիմնաւորելու պարզ կարողութիւններ:

• Ձեւաւորել նախապէս ընթերցած ստեղծագործութիւններու բովանդակութիւնը, կերպարները յիշելու, անոնց բնութագրական նկարագիրները համեմատելու եւ այդ մասին դատողութիւններ եւ եզրակացութիւններ կատարելու պարզ մակարդակ՝ կարողութիւններ:

• Ձեւաւորել բանաստեղծութիւնը, պատմուածքը, առակը, հեքիաթը, հանելուկը գործնականօրէն իրարմէ տար-

բերելու կարողություն եւ ստեղծագործությունները նշուած բառերով ներկայացնելու պարզ ունակություն:

- Ծանօթութիւն դասագիրքին մէջ զետեղուած ստեղծագործություններու (ինչպէս նաեւ երեխաներուն յայտնի մանկական գրողներու) հեղինակներուն, անոնց կենսագրական ուշագրաւ դէպքերուն: Ծանօթութիւնը իրականացնել նաեւ գրողներու նկարներ ցուցադրելով երեխաներուն:

1.3 ԿԱՐԴԱՑԱԾ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱՐՏԱԴՐԵԼՈՒ (ՊԱՏՄԵԼՈՒ) ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

- Զարգացնել կարդացած ստեղծագործութիւնը առանց ուսուցիչի հարցերու վերարտադրելու երեխաներուն կարողութիւնը:

- Հասնիլ անոր, որ կարդացածը վերարտադրած ժամանակ (պատմած ատեն) աշակերտները գործածեն հեղինակին բառերը, արտայայտութիւնները եւ նկարագրութիւնները:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Պատմելը կը հարստացնէ աշակերտին բառամթերքը, կը զարգացնէ անոր խօսքը, երբ ան ոչ միայն կը վերարտադրէ կարդացածը իր բառերով, այլեւ կը գործածէ նորածանօթ բառերը, հեղինակին լեզուական արտայայտչամիջոցները:

ՅԻՇԵՆՔ. Կարդացած բնագիրը ստեղծագործաբար պատմել կը նշանակէ պատմել, փոխելով դէպքերուն ընթացքը, կերպարներուն գործողութիւնները, պատմութեան համար հիստել նոր շարունակութիւն մը (ինչ եղաւ

յետոյ):

- Աստիճանաբար զարգացնել կարդացած ստեղծագործութեան ծրագիրը (փլանը) ուսուցիչին օգնութեամբ կազմելու եւ այդ ծրագիրին համաձայն կարդացած ստեղծագործութիւնը պատմելու երեխաներու կարողութիւնները:

- Գրեթէ հմտութեան աստիճանի հասցնել կարդացած ստեղծագործութեան (կամ ստեղծագործութեան առանձին պարբերութիւններուն) նոր խորագիր առաջարկելու կարողութիւնը:

1.4 ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

- Երկու շաբաթը անգամ մը անդրադառնալ երեխաներուն արտադասարանային ընթերցանութեան՝ քըննարկելով անոնց կարդացած ստեղծագործութիւնը:

- Պահել արտադասարանային ընթերցանութեան օրագիր՝ նշելով կարդացած ստեղծագործութեան խորագիրը եւ հերոսներուն (գործող անձերուն) անունները:

- Ձեւաւորել լրագրային նիւթեր (ուսուցիչին ընտրութեամբ) եւ մանկական ամսագիրներ, դպրոցական ամսաթերթեր ընթերցելու սովորութիւն, զանոնք դասարանէն ներս ընկերներուն ներկայացնելու կարողութիւն:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Աշակերտը կը կարդայ հասկնալով, սահուն եւ արտայայտիչ:

2. Կը պատմէ կարդացած ստեղծագործութիւնները (ինչպէս դասագիրքին մէջ եղած, այնպէս ալ՝ արտադասարանային ստեղծագործութիւններ), ինչպէս ուսուցիչին

հարցումներուն օգնութեամբ, այնպէս ալ՝ ինքնիրոյն:

3. Կրնայ որոշել կարդացած ստեղծագործութեան գաղափարը, այդ մասին կը կառուցէ բարոյախրատական կողմը ներկայացնող 2-3 նախադասութիւններ:

4. Կը ձեակերպէ իր տեսակէտը՝ մօտեցումները, գործող անձերուն արարքներուն մասին, այդ կապակցութեամբ կը կառուցէ դատողական միտքեր:

5. Կրնայ կոահումի ճամբով որոշել կարդացած ստեղծագործութեան անձանօթ բառերուն իմաստները:

2. ԽՕՍՔ, ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

2.1. ԲԱՌԱՄԹԵՐՔԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄ

- Աշխատանք տանիլ դասագիրքին մէջէն կարդացած ստեղծագործութիւններէն սորված եւ գործունէութեան այլ ձեւերու ընթացքին ձեռք բերած նորածանօթ բառերը սեփականեցնելու եւ խօսքին մէջ զանոնք գործածելու ուղղութեամբ:

ՅԻՇԵՆՔ. Բառամթերքի հարստացումին ուղղութեամբ տարուող աշխատանքը ոչ միայն շատ կարդալը եւ անծանօթ բառերու բացատրութիւնն է, այլեւ այդ բառերը մտապահելուն համար իրականացուած ամէնօրեայ աշխատանքը:

- Բառամթերքի նորածանօթ բառերը մտապահելու եւ անոնց շուրջ ամէնօրեայ աշխատանք տանելու համար պահել բառատետրակ: Այդ տետրակներուն մէջ գրել իւրաքանչիւր օր սորված նոր եւ ուղղագրական արժէքներ ներկայացնող բառերը:

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ. Նորածանօթ բառերը կը դառնան աշակերտին սեփականութիւնը միայն այն պարագային, երբ անոնք մշտապէս գտնուին աշակերտին աչքերուն առջեւ: Ասիկա կը նշանակէ, որ անհրաժեշտ է դասարանէն ներս ունենալ նոր սորված եւ ուղղագրական արժէքներ ներկայացնող բառախումբերու պաստառներ, որոնք միշտ պէտք է գտնուին երեխաներուն տեսադաշտին վրայ, եւ ուսուցիչներն ալ անընդհատ պէտք է աշակերտներուն ուշադրութիւնը հրաւիրեն անոնց վրայ:

2.2. ԲԱՆԱԻՈՐ ԽՕՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

• Գործածելով դասագիրքի ստեղծագործություններում բովանդակության ընձեռած առիթը՝ երեխաները մղել երկխոսություններու, իրարու հետ որոշակի թեմաներու շուրջ վիճաբանություններ կատարելու: Օրինակ, «Հայրենի Աղբիւր» դասագիրքին «Փափուկ ձիւն» բանաստեղծութեան շուրջ աշխատանք տարած ժամանակ կարելի է առաջարկել աշակերտներուն՝ «Ներկայացուցէք ձեր կարծիքը. ինչով օգտակար կամ վնասակար են ձիւնը, անձրերը: Հիմնաւորեցէք ձեր կարծիքը»: Նոյն դասագիրքին «Հայկական տօնածառը» պատմուածքին բովանդակութեան քննարկումի ժամանակ կարելի է աշակերտներուն տալ այս տեսակի հարցում մը. «Արդեօք հնարաւոր է, որ ծառը ձմրանը ներս բերեն, յետոյ գարնանը ետ նորէն տնկեն բակը»: «Ինչո՞ւ այդպէս կը կարծէք»: Հարցերէն յետոյ հնարաւորութիւն պէտք է տալ, որ աշակերտները խօսին, ձեւակերպեն իրենց միտքերը ամբողջական, միտքով իրար կապուած նախադասություններով:

• Դասագիրքին մէջ զետեղուած ստեղծագործություններու հերոսներու ճիշդ եւ սխալ գործածած բառերը, խօսքերը քննարկելու ճամբով (աշակերտներուն միջոցաւ) սորվողներուն օգնել, որ անոնք վերյիշեն քաղաքավարի՝ բարեկիրթ խօսքի կանոնները՝ աստիճանաբար անոնց բառամթերքին մէջ աւելցնելով նման բառերը, արտայայտությունները եւ վերջապէս, գործածել վարքի մէջ՝ ձեւաւորելով բարեկիրթ խօսք, քաղաքավարի վարուելակերպ: Օրինակ, «Աշակերտը» պատմուածքի Բ. մասը ընթերցելէն յետոյ կարելի է երեխաներուն ուշադրութիւնը հրաւիրել Սարգիսի եւ ուսուցիչի խօսակցութեան, մասնաւորապէս՝ «Ի՛նչ ընէի, արդէն շատ գործ ունիս» նախադասութեան վրայ: Անհրաժեշտ է քննարկել՝ արդեօք քաղա-

քավարի խօսեցաւ ուսուցիչին հետ Սարգիսը: Ո՞րն է անոր թոյլ տուած խօսքային սխալը: Ինչպէ՞ս ան պէտք է դիմէր ուսուցիչին (*Դուք շատ գործ ունիք*), եւ այսպէս խօսակցութիւնը տեղափոխել այլ հարթութիւն (*Իսկ դուք ինչպէ՞ս կը խօսէիք*):

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՅՈՒՅՈՒՄ. Երեխաներուն ազատ, անկաշկանդ խօսելու՝ միտքերը արտայայտելու հնարաւորութիւն տալու համար պէտք է ընդհատել անոնց խօսքը, առաւել եւս՝ չբռնանալ անոնց կարծիքին վրայ. թող ազատ խօսին, վիճին, միմիանց համոզեն, ապացուցեն իրենց կարծիքին իրաւացիութիւնը: Կարելի է այդ պահուն անոնք ձիշդ են, թէ՛ ոչ: Երբ երեխաները աւարտեն երկխօսութիւնը, այն ատեն ուսուցիչը կրնայ լսել դասարանի միւս աշակերտներուն կարծիքը. «Ո՞վ այլ կերպ կը մտածէ: Ինչո՞ւ այդպէս կը մտածէ: Հիմնաւորեցէք ձեր տեսակէտը՝ կարծիքը»: Այնուհետեւ ուսուցիչը կրնայ ամփոփել երեխաներու կարծիքը, ներկայացնելով իր կարծիքը, եւ երեխաներուն ուշադրութիւնը հրափրելով նիւթին վերաբերող առարկայական փաստերուն վրայ:

- Ձեւաւորել առաջարկուած թեմային, կարդացած ստեղծագործութեան գաղափարին, հերոսներուն վարքին շուրջ բանավիճելու, ընկերներու եւ ուսուցիչին հետ երկխօսութիւններու մէջ մտնելու կարողութիւն:

- Ձեւաւորել եւ զարգացնել դասագիրքին մէջ գետեղուած մեծածաւալ նկարները (կամ ուսուցիչի ընտրութեամբ՝ այլ նկարներ) ուշադիր դիտելու, անոնց շուրջ բանաւոր շարադրութիւն հիւսելու կարողութիւն: Այս աշխատանքի սկիզբը ուսուցիչը աշակերտներուն պէտք է ներկայացնէ ծրագիր (գրատախտակի վրայ գրուած) եւ օգնէ, որ աշակերտները պատմեն այդ ծրագիրին օգնութեամբ: Օրինակ, «Հայրենի Աշխարհ» դասագիրքին 23-24 էջերուն վրայ տրուած է գեղեցիկ եւ գունեղ նկար մը՝

«Ինչպէս կը դիմաւորեն ձմեռը» խորագիրով: Անհրաժեշտ է նախ աշակերտներուն ժամանակ տալ (2-3 վայրկեան), որպէսզի անոնք ուշադիր դիտեն նկարը եւ մտածեն նկարի բովանդակութեան շուրջ: Ապա, հարցազրոյց մը կազմակերպել նկարին բովանդակութեան շուրջ:

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՅՈՒՅՈՒՄ. Ներկայացնենք նկարին շուրջ տարուող աշխատանքին ընթացքը, որ երեխաները կը նախապատրաստէ պատմելուն:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՆԿԱՐԻՆ ԵՈՒՐՋ (բանաւոր)

1. *Ուշադիր դիտեցէք նկարը: Տարուան ո՞ր եղանակը պատկերուած է այդ նկարին մէջ: Ինչո՞ւ այդպէս կը կարծէք: Ինչէ՞ն գիտցաք:*

2. *Ի՞նչ կը կատարուի բնութեան մէջ: Ամրան համեմատ ի՞նչ փոփոխութիւններ կատարուած են (ինչպիսի՞ն են ծառերը - տերեւաթափ, մերկ, երկինքը - ամպոտ, արեւը - տկար կը ջերմացնէ, եայլն):*

3. *Ի՞նչ կենդանիներ կան ծառին տակ: Ի՞նչ կ'ընեն անոնք:*

4. *Ինչպէ՞ս կը նախապատրաստուին ձմրան չուող թռչունները, ո՞ր թռչունները կը չուեն: Ի՞նչ կ'ընեն միջատները (մրջիւնները, մեղուները):*

Նկարին շուրջ այսօրինակ համադասարանային զրոյցէ մը յետոյ անդրադառնալ գրատախտակին վրայ գրուած ծրագիրին (նախագիծին):

Ինչպէս կը դիմաւորեն ձմեռը Նախագիծ.

1. *Տարուան ո՞ր եղանակը պատկերուած է նկարին մէջ*

ուշ աշուն

2. Ի՞նչ փոփոխություններ կը կատարուին բնութեան մէջ

ամպոտ երկինք,
չորցած, դեղին
տերեւներու
թափիլ, անձրեւել

3. Ի՞նչ կ'ընեն թռչունները եւ կենդանիները բնութեան մէջ

տաք երկիրներ չուել,
ձմեռել, մսիլ, պաշար
կուտակել, կաղին, մեղր, սունկ

4. Ինչպէ՞ս կը նախապատրաստուին ձմրան միջատները

մեղու, մրջին, չոր
խոտ, սերմեր, մեղրամոմ

5. Ինչպէ՞ս օգնել ձմեռող (չգաղթող) թռչուններուն

կերակրամաններ, բոյն, հացի
փշրանք, կուտ


Շահեկան է գաղթող թռչուններ եւ չուող թռչուններ բառակապակցութիւնները զուգահեռաբար գործածելը:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Աշակերտը կը յիշէ իր սորված նորածանօթ բառերը, կը հասկնայ անոնց իմաստը եւ կրնայ բացատրել, իսկ անհրաժեշտութեան պարագային՝ նաեւ գործածել զանոնք իր խօսքին մէջ:

2. Կրնայ ազատ հաղորդակցիլ դասընկերներուն հետ, կարծիք յայտնել, բարեկիրթ խօսիլ ուրիշներուն տեսակէտին շուրջ, ներկայացնել սեփական մօտեցումները, գործածելով «*իմ կարծիքովս*» արտայայտութիւնը:

3. Ունի կարդացած ստեղծագործութեան կերպարնե-



րուն արարքներու շուրջ դատողութիւններ ընելու, իր տեսակէտը հիմնաւորելու կարողութիւն, գործածելով նաեւ բարդ նախադասութիւններ:

4. Կը տիրապետէ բարեկիրթ հաղորդակցութեան հիմնական ձեւերուն, ունի մեծերուն հետ խօսելու կանոններու պահպանումի ձեւեր:

5. Կրնայ կազմել բանաւոր շարադրութիւններ իր տեսածին, լսածին, զգացածին, ապրածին (զգացումներու) շուրջ, օգտուելով նախապէս կազմուած նախագիծէն: Պատմած ատեն կը գործածէ նոր սորված բառերը եւ արտայայտութիւնները:

3. ԼԵԶՈՒԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՑՈՒՄ

3.1. ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

- Ամրակայել նախադասութեան, որպէս ամփոփ, աւարտուն միտքի մասին աշակերտներուն ունեցած գիտելիքները եւ կարողութիւնները (նախադասութիւնը կ'արտայայտէ ամփոփ՝ աւարտուն միտք, նախադասութեան վերջը կը դրոփ վերջակէտ, անոր առաջին բառը կը գրենք մեծատառով):

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ. Աշակերտներուն գիտակցութեան հասցնել, որ ի տարբերութիւն բառակապակցութեան, (որ, ի դէպ, նոյնպէս միտք կ'արտայայտէ. *հրաշագեղ բնութիւն, ուսանած մարդ, նկարող աղջիկ, իմաստուն խօսքեր*, եւայլն) նախադասութիւնը ամփոփ, աւարտուն միտք կ'արտայայտէ:

- Գաղափար տալ ըստ երանգի նախադասութեան տեսակներու մասին (պատմողական, հարցական, հրամայական, բացազանչական):

- Զարգացնել ըստ երանգի տարբեր նախադասութիւնները համապատասխան առոգանութեամբ ընթերցելու երեխաներու կարողութիւնը, հիմք ընդունելով հայերէնի առոգանութեան նշանները (շեշտ, հարցման նշան՝ պարոյկ եւ բացազանչական նշաններ):

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ. Հստ երանգներու նախադասութեան տեսակները եւ անոնց անունները ուսուցանելը շահեկան է իրականացնել միասնաբար՝ համատեղ: Այդ նպատակով անհրաժեշտ է ընտրել այնպէս փոքրածաւալ բնագիր, որուն մէջ առկայ ըլլան նախադասութեան բոլոր տեսակները: Այս տեսակ մօտեցումի պարագային աշակերտները կ'ունենան նախադասութեան բոլոր տեսակները միասին դիտարկելու, զանոնք իրարու հետ համեմատելու հնարաւորութիւն:

Թեքսթը ընթերցելուն յընթացս աշակերտները գործնականօրէն կը ծանօթանան ինչպէս նախադասութեան տեսակներուն, այնպէս ալ առոգանութեան նշաններուն:

- Եւաւորել ընթերցած բնագիրին մէջ նախադասութեան տեսակները որոշելու, միեւնոյն նախադասութիւնը տարբեր երանգներով ընթերցելու կարողութիւններ: Օրինակ՝

Թռչունները չուեցին տաք երկիրներ:

Թռչունները չուեցի՞ն տաք երկիրներ:

Թռչունները չուեցի՛ն տաք երկիրներ:

- Ամրակայել տրուած բառախումբով միտքով իրարու հետ կապուած նախադասութիւններ կազմելու, անոնց խորագիր մը տալու երեխաներուն կարողութիւնները:

3.2. ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ

- Զարգացնել ածական + գոյական (*հսկայ ծառեր*), բայ + գոյական (*սիրելի հայրենիքը*), դերբայ + գոյական (*ծագող արեւ*), թուական + գոյական (*հարիւրաւոր աստղեր*), դերանուն + գոյական (*ձեր կարծիքը*) բաղադրիչներով բառակապակցութիւններ կազմելու եւ խօսքին մէջ

զանոնք գործածելու կարողություններ:

- Աշակերտներու բառամթերքը հարստացնել տարբեր բաղադրիչներով բառակապակցություններու թեմաթիք խումբերով: Օրինակ, **մարդու աչքերը** ներկայացնող (*նշածնի աչքեր, ժպտացող աչքեր, բարի աչքեր, թախծոտ աչքեր, ցամքած աչքեր եւայլն*), **մարդուն որակները** (*բարեհոգի դրացի, ջանասէր աշակերտ, հայրենասէր երիտասարդութիւն*), **աշունը ներկայացնող** (*դեղնահեր աշուն, տերեւաթափ աշուն, բերքառատ աշուն, եւայլն*):

- Հմտութեան մակարդակի հասցնել տրուած ծանօթ բառաշարքերուն բառերը իրարու միացնելու եւ բառակապակցութիւններ կազմելու երեխաներուն կարողութիւնները:

ՅԻՇԵՆՔ. Կապակցուած տրամաբանական խօսք կառուցելու համար աշակերտները պէտք է կարենան խօսքին մէջ գործածել բառակապակցութիւններ՝ իրար կապելով խօսքի տարբեր մասեր ներկայացնող բառեր:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՔՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Աշակերտը կրնայ կազմել եւ գրի առնել տարբեր երանգաւորում ունեցող պարզ ընդարձակ նախադասութիւններ: Ուսուցիչին յանձնարարութեամբ կրնայ փոխել նախադասութիւններուն երանգները:

2. Անսխալ գրի կ'առնէ իր կազմած նախադասութիւնները՝ պահպանելով վերջակէտի եւ նախադասութեան սկիզբը մեծատառին գրութեան կանոնները:

3. Կը տարբերէ բառակապակցութիւնը նախադասութենէն եւ կ'ըմբռնէ նախադասութեան՝ ամփոփ միտք արտայայտելու գաղափարը:

4. Կրնայ տրուած բառերը եւ բառակապակցութիւնները գործածել միտքով իրարու հետ կապուած նախադասու-

թիւներու մէջ (4-5 նախադասութիւն) եւ խորագիր տալ ստացուած պարբերութեան:

5. Կը կազմէ եւ խօսքին մէջ կը կիրառէ տարբեր բաղադրիչներ ունեցող բառակապակցութիւններ:

6. Կրնայ տրուած կաղապարներով նախադասութիւն կազմել (եւ ընդհակառակը) եւ գրի առնել:

3.3. ԲԱՌ, ՎԱՆԿ, ՀՆՉԻՒՆ

ա) Բառ, բառագիտութիւն.

• Գաղափար տալ բառի՝ որպէս առարկայ, առարկայի յատկանիշ, գործողութիւն, գործողութեան յատկանիշ, երեւոյթ եւ այլ իմաստներ արտայայտող տառախումբի մասին: Բառին սահմանումի (կանոնի) գիտակցական իւրացում:

• Ձեւաւորել նմանաձայն բառերը իրարմէ տարբերելու, իմաստները բացատրելու եւ զանոնք ձիշդ գրելու, բառակապակցութեան եւ նախադասութեան մէջ գործածելու ունակութիւններ:

• Ամրակայել հոմանիշ եւ հականիշ բառերուն մասին աշակերտներու ունեցած գիտելիքները եւ կարողութիւնները: Բառամթերքը հարստացնել հոմանիշներով եւ հականիշներով:

• Գաղափար ձեւաւորել, որ հոմանիշները ունին իմաստային նրբերանգներ, որոնք յաճախ իրարմէ իմաստով կը հեռանան եւ յաճախ նոյնիսկ բոլորովին այլ իմաստ կը ստանան:

• Ամրակայել եւ խորացնել վանկի մասին աշակերտներուն ունեցած գիտելիքները եւ կարողութիւնները: Գաղափար տալ բազմավանկ բառերուն, վանկատումի՝ որպէս տողադարձի միջոցի, տողադարձի ձեւերուն եւ գաղտնավանկ ը-ին մասին:

• Ձեւաւորել իմաստ ներկայացնող բառերուն խումբը մէկ բառով ըսելու կարողութիւն: Օրինակ՝ *հայրենիքը սիրողին*,

միս վաճառողին, հացը թխողին, հագուստ կարողին, ինքնաշարժ վարողին, ակրան բուժողին, եւ այլն:

- Ամրակայել հնչիւնի եւ անոր պատկերի՝ տառին մասին երեխաներու գիտելիքները եւ կարողութիւնները:

- Ամրապնդել ծայնաւոր եւ բաղաձայն հնչիւնները գործնականօրէն իրարմէ տարբերելու երեխաներուն կարողութիւնը՝ զայն դարձնելով հմտութիւն:

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ. Աշակերտները ոչ թէ գոց պէտք է սորվին, այլ արտասանելու, ասմունքելու ծամբով: Այս նպատակով անոնք պէտք է երկար արտասանեն առաջարկուող հնչիւնները: Եթէ հնչիւնը կ'արտասանուի երկար, եւ մինչեւ վերջ կը լսուի նոյն ձայնը՝ *ուուուու ...*, ապա՝ ծայնաւոր է:

Եթէ հնչիւնը երկար արտասանած ժամանակ մինչեւ վերջ նոյն ձայնը չի լսուիր, այլ կը շարունակուի ը ձայնով, ապա՝ բաղաձայն է: Օրինակ՝ *ղըըըը...*

- Գաղափար տալ ծայնաւոր հնչիւնի վանկակազմ յատկանիշին մասին. առանց ծայնաւորի վանկ չի կազմուիր՝ իւրաքանչիւր վանկ պէտք է ունենայ մէկ ծայնաւոր: Եթէ բառի մը վանկին մէջ ծայնաւոր գրուած չըլլայ, ուրեմն՝ կը լսուի ը, այդ ը-ն կ'արտասանենք, բայց կը գրենք միայն տողադարձի ժամանակ:

- Գործնական ծամբով (վարժութիւններու կատարման միջոցով) բացայայտել, որ կան բառեր, որոնց հնչիւններուն քանակը չի համապատասխաներ տառերուն քանակին: Ձեւաւորել զանոնք ճիշդ կարդալու եւ գրելու կարողութիւն:

բ) Բառակազմութիւն (արմատ, ածանց, յօդակապ)

- Գաղափար տալ արմատի մասին՝ որպէս բառի հիմնական իմաստը արտայայտող մասի:

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ. Արմատին գաղափարը ընկալելի դարձնելու համար անհրաժեշտ է աշխատանքը սկսիլ նոյնարմատ բառերուն շուրջ տարուող վարժութենէն: Օրինակ՝

Ընդգծէ՛ բառերուն այն մասը, որ կը կրկնուի բառաշարքերուն մէջ:

<i>ծաղիկ</i>	<i>ջուր</i>	<i>տուն</i>
<i>ծաղկաման</i>	<i>ջրաման</i>	<i>տնամերձ</i>
<i>ծաղկաշատ</i>	<i>ջրկիր</i>	<i>անտուն</i>
<i>ծաղկեպսակ</i>	<i>ջրատատ</i>	<i>տնային</i>
<i>ծաղկաւոր</i>	<i>ջրհոր</i>	<i>մեծատուն</i>

Աշակերտները կ'ընդգծեն բառին կրկնուող մասերը եւ կը յայտնաբերեն, որ ընդգծուած բառերը կ'արտայայտեն բառերուն հիմնական իմաստը: Այս աշխատանքէն յետոյ միայն կարելի է ձեւակերպել կանոնը: Այս պարագային, կը ստացուի այնպէս, որ երեխաները իրենք ձեւակերպեցին կանոնը եւ կը հասկնան իրենց ըսածը:

• Ծանօթացում բարդ բառերու կառուցուածքին

ՅԻՇԵՆՔ Աշակերտները ունին իմաստ ներկայացնող բառերու խումբը մէկ բառով ըսելու կարողութիւն. հայրենիք սիրողին՝ հայրենասէր, միս վաճառողին՝ մսավաճառ, եւ այլն: Ճիշդ այս տեսակ բառերուն շուրջ վերլուծական աշխատանք տանելով ալ պէտք է սկսիլ բարդ բառերուն ուսուցումը՝ այս անգամ երթալով բարդ բառէն (հայրենասէր) դէպի անոր բացատրութիւնը

*հայրենիք սիրող: Հետեւաբար՝ արմատներն են՝ հայրենիք
եւ սէր բառերը:*

- Ձեւաւորել բարդ բառերուն արմատները որոշելու, տրուած արմատներով նոր նոյնարմատ բառեր կազմելու կարողութիւն:

- Գաղափար տալ ածանցին՝ որպէս բառին նոր իմաստ տուող մասնիկի, բառին նկատմամբ անոր ունեցած դիրքերուն (նախածանց, վերջնածանց) մասին: Հասկացութիւն ածանցներուն՝ բառին տուած իմաստին մասին:

- Ձեւաւորել տրուած ածանցներով պարզ ածանցաւոր բառեր կազմելու եւ զանոնք խօսքին մէջ գործածելու կարողութիւն, բառամթերքը հարստացնել ածանցաւոր բառերով:

- Գաղափար տալ յօդակապին մասին: Ա յօդակապը բառին մէջ որոշելու եւ յօդակապաւոր բառերը ծիշդ հնչիւնափոխելու կարողութեան ձեւաւորում:

ՉԱՓՈՐՈՒՄԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՔՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՁԻ ՀԱՄԱՐ

1. Աշակերտը գիտէ նմանաձայն բառեր եւ անցած բառերուն ուղղագրութիւնը:

2. Կրնայ ըսել առաջարկուած բառերուն հոմանիշները եւ հականիշները:

3. Կրնայ բառերը վանկատել, ծիշդ տողադարձել եւ անհրաժեշտութեան պարագային գործածել գաղտնավանկ ը-ն:

4. Գործնականօրէն կը տարբերէ ձայնաւոր եւ բաղաձայն հնչիւնները եւ զանոնք կ'արտաբերէ մաքուր եւ անխառն:

5. Կրնայ կազմել բարդ բառեր, կ'որոշէ անոնց արմատները, ածանցաւոր բառերուն մէջ՝ ածանցները: Կը կազմէ ածանցաւոր բառեր եւ կը գործածէ խօսքին մէջ:

4. ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

- Ամրակայել երկրորդ դասարանին մէջ սորված ուղղագրական արժէք ներկայացնող բառերը գրագէտ գրելու աշակերտներու կարողութիւնը, աշակերտներու միջոցաւ կազմել զանոնք ներկայացնող պաստառներ:

- Աշխատանք տանիլ ձայնաւորներու (օ-ո, է-ե), երկինչիւններու (այ-ոյ), բաղաձայններու (դ-թ, գ-ք, ո-ր, ղ-խ, ջ-չ, վ-ւ) ուղղագրութեան ուսուցման ուղղութեամբ:

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՅՈՒՅՈՒՄ. Ուղղագրական արժէք ներկայացնող բառերուն շուրջ աշխատանք պիտի տարուի իւրաքանչիւր դասի ժամանակ՝ ամէն անգամ կրկնելով սորված 2-3 բառ:

ՅԻՇԵՆՔ. Երբ աշակերտը դասագիրքի ստեղծագործութիւնները կարդացած ատեն կը հանդիպի ուղղագրական արժէք ներկայացնող բառերու, անպայման ուշադրութիւնը պէտք է հրաւիրել անոնց վրայ, եւ աշխատանք տանիլ զանոնք մտապահելու ուղղութեամբ:

- Դասարանին մէջ ստեղծել ուղղագրական բառախումբերու պաստառներ եւ զանոնք մշտապէս ձգել պատերուն վրայ:

ՅԻՇԵՆՔ. Ուղղագրութիւնը կը սորվին անընդհատ տեսնելով (միշտ աչքին առջեւ ունենալով) եւ անընդհատ գրելով:

5. ՁԵՒԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ՁԵՌՔԻՆԵՐՈՒՄ

5.1. ԳՈՅԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՈՒՆԵՑԱԾ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԽՈՐԱՑՈՒՄ

- Ամրապնդել երկրորդ դասարանին մէջ գոյականի մասին աշակերտներու ունեցած գիտելիքները եւ կարողութիւնները:

- Ձեւաւորել հարցերու միջոցաւ գոյական անունը տարբերելու հմտութիւն (*ո՞վ, ովքե՞ր, ի՞նչ, ինչե՞ր*) ամրակայելով անձ եւ իր ցոյց տուող գոյականներուն մասին երեխաներու ունեցած գիտելիքները եւ կարողութիւնները:

- Զարգացնել գոյականի յոգնակի թիւի կազմութեան մասին աշակերտներու ունեցած գիտելիքները եւ կարողութիւնները: Աշխատանք տանիլ գոյականի յոգնակի թիւի ուղղագրութեան իւրացման ուղղութեամբ (կրկնակ ն տառի պարագան ներկայացնել շարք մը բառերով՝ *նստարան-նստարաններ, սեղան-սեղաններ*, եւայլն)

- Գիտելիքներ եւ կարողութիւններ հաղորդել միավանկ եւ բազմավանկ բառերը յոգնակի դարձնելու մասին (*շուն-շուններ, մատանի-մատանիներ*, եւայլն):

- Ընդարձակել յատուկ անուններու մասին երեխաներուն ունեցած գիտելիքներու սահմանները (մեծատառը՝ *սարերու, ծովերու, լիճերու, գետերու, քաղաքներու, պետութիւններու* անուններուն սկիզբը):

- Յստակեցնել, ամրակայել եւ խորացնել գոյականի հոլովումի մասին աշակերտներու ունեցած գիտելիքները (հոլովական վերջաւորութիւնները եւ անոնց իմաստները) եւ բառը նախադասութեան մէջ ճիշդ թեքելու (հոլովելու)

անոնց կարողութիւնը:

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՅՈՒՅՈՒՄ. Գոյականի հոլովումի ուղղութեամբ աշակերտներու գիտելիքները պէտք է վերածել նախադասութեան մէջ գոյական անդամը ճիշդ գործածելու, բառամթերքը նոր գոյականներով հարստացնելու աշխատանքի: Այդ նպատակով գոյականի հոլովումի գաղափարը պէտք է տալ՝ զայն հոլովելով նախադասութեան մէջ, որպէսզի աշակերտները հասկնան իրաքանչիւր հոլովի իմաստային արժէքը:

- Գաղափար տալ գոյականի հոլովումի տարբեր ձեւերու մասին: Օրինակ, **սեղանով**, բայց՝ **գրութեամբ**:

5.2. ԲԱՅԻ ՄԱՍԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՈՒՆԵՑԱԾ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄ

- Կրկնել եւ ամրակայել բայի մասին՝ որպէս առարկային կատարած գործողութիւնը եւ վիճակը ներկայացնող բառեր: Հմտութեան հասցնել նախադասութեան մէջ գործածուած բայերը հարցերու միջոցաւ որոշելու երեխաներու կարողութիւնը (*ի՞նչ ընել, ի՞նչ կ'ընէ, ի՞նչ ըրաւ, ի՞նչ եղաւ*, եւայլն):

- Խորացնել երեխաներուն գիտելիքները բայի դէմքին մասին (Ա, Բ, Գ), ամրակայել բայը ըստ դէմքի փոխելու (խոնարհում), զանոնք նախադասութեան մէջ ճիշդ գործածելու, հարցերու միջոցաւ բային դէմքը (նախադասութեան մէջ) որոշելու աշակերտներուն կարողութիւնները:

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՅՈՒՅՈՒՄ. Բային դէմքը, թիւը, ժամանակը ճիշդ որոշելու համար շահեկան է զանոնք դիտարկել նախադասութեան մէջ՝ իբրեւ «օգնական միջնորդ» գործածելով համապատաս-

խան հարցումները:

- Ամրապնդել բային թիւը ձիշոյ որոշելու, նախադասութեան մէջ ձիշոյ գործածելու, նախադասութեան ենթակային հետ ստորոգիչին դէմքով եւ թիւով համապատասխանեցնելու աշակերտներուն կարողութիւնները:

ՅԻՇԵՆՔ Խօսքի մասերուն շուրջ աշխատանքի արդիւնաւէտութեան բարձրացումին համար մշտապէս պէտք է գործածել հարցադրումը՝ որպէս «օգնական միջնորդ»:

- Խորացնել բային **ժամանակի** մասին աշակերտներուն ունեցած գիտելիքները եւ կարողութիւնները: Զարգացնել բայը **անցեալ, ներկայ** եւ **ապառնի** ժամանակներով խոնարհելու, նախադասութեան մէջ եւ խօսքի մէջ զանոնք ձիշոյ գործածելու, համապատասխան **հարցադրումներ** ընելու աշակերտներուն կարողութիւնը:

- Գաղափար **-ել, -ալ, -իլ** լծորդութեան մասին: Ձեւաւորել նշուած վերջաւորութիւններէն օգտուելով բայի լծորդութեան տեսակը որոշելու, զայն հիմնաւորելու աշակերտներու կարողութիւնը:

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՅՈՒՅՈՒՄ. Դերանունին մասին աշակերտներուն գիտելիք եւ կարողութիւն ուսուցանելու նպատակով, աշակերտներուն առաջարկել որեւէ պարզ բնագիր մը (պատմութիւն մը)՝ կրկնուող գոյականներով (յատուկ եւ հասարակ): Կարդալ բնագիրը եւ անոնց բացատրել, որ երբ միեւնոյն բառերը շատ կը կրկնուին, գեղեցիկ, բարեհունչ չէ այդ մէկը: Ձիշոյ ատոր համար ալ պէտք է կրկնուող բառերը փոխարինել դերանուններով, այսինքն՝ այնպիսի բառերով, որոնք կրնան կատարել կրկնուող գոյականներուն դերերը. այդ պատճառով ալ անոնք կը կոչուին դերանուն՝ որեւէ բառի դերը իր վրան վերցնելը, դերը կատարելը:

- Վարժութիւններու կատարումի ճամբով աշակերտ-

ներուն յանգեցնել այն եզրակացութեան, որ եզակի թիով դրուած գոյականներուն կը փոխարինեն եզակի դերանուններ, յոգնակի թիովին՝ յոգնակի դերանուններ:

- Ամրապնդել անձնական դերանունները յոգնակի գործածելու քաղաքավարական ձեւերուն մասին երեխաներու կարողութիւնը՝ զայն հասցնելով հմտութեան (*Դուք, Ձեր, Ձեզ*, եւ այլն): Ձեւաորել գրաւոր խօսքին մէջ զանոնք մեծատառով գրելու կարողութիւն:

5.3. ԱԾԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄ

- Կրկնել եւ ընդարձակել քծական անունին մասին, որպէս առարկայի **ինչպիսին, որպիսին** ըլլալը ցոյց տուող բառեր:


- Աշակերտներու բառամթերքը հարստացնել ածականներով, մասնաւորապէս նկարագրութիւն ներկայացնող բառերով՝ խթանելով բազմաբնոյթ ածականներով խօսք կառուցելու աշակերտներու կարողութիւնը:

- Ձեւաորել ճիշդ հարցադրումներ դնելու, հարցը գոյականէն բխեցնելու եւ ածականին հետ կապելու աշակերտներուն կարողութիւնը:

- Գոյականը ածականին հետ հոլովելու ճամբով աշակերտները բերել այն եզրակացութեան, որ ածականը չի հոլովուիր, կը հոլովուի միայն անոր կից տրուած գոյականը: *Օրինակ՝ վարդագոյն շինութիւն, բարձրայարկ շինութեան, բազմաբնակարան շինութենէ, դպրոցական շինութեամբ:*

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՁԻ ՀԱՄԱՐ

1. Աշակերտը գիտելիքներ ունի գոյական, բայ, ածա-



կան, դերանուն խօսքի մասերու մասին: Համապատասխան հարցերուն միջոցով կրնայ որոշել զանոնք նախադասութեան մէջ, կը գործածէ դէմքով, թիւով, ժամանակով եւ հոլովով ճիշդ ինչպէս բանաւոր, այնպէս ալ ինքնիրոյն գրաւոր խօսքերուն մէջ:

2. Ողջ ուսումնական տարուան ընթացքին սորված ուղղագրական արժէք ներկայացնող բառերը կը գրէ ճիշդ, ինչպէս թելադրութեան, այնպէս ալ ինքնիրոյն խօսք կառուցած ատեն:

3. Բառամթերքը հարուստ է այն գոյականներով, բայերով եւ ածականներով ու դերանուններով, որոնց ան հանդիպած է իր կարդացած ստեղծագործութիւններուն մէջ եւ զանոնք խօսքի մէջ կը գործածէ անսխալ:

6. ԳՐԱԻՈՐ ԽՕՍՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

6.1. ՎԱՅԵԼՈՒՉ ԳՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ

- Բժախնդիր աշխատանք տանիլ գեղեցիկ՝ վայելչագրութեան կանոններուն համապատասխան գրել սորվեցնելուն ուղղութեամբ: *(Առաւել մանրամասն տես երկրորդ դասարանի ծրագիրին մէջ):*

- Գրաւոր խօսքը գնահատած ժամանակ կարելորել աշակերտներուն ձեռագիրը՝ վատ ձեռագիրին կամ անփոյթ գրելու համար գնահատականէն (նիշէն) նուազեցնել մէկ միաւոր:

6.2. ԸՆԴՈՐԻՆԱԿՈՒԹԻՒՆ (ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆ)

Վերարտադրողական ընդօրինակութիւնը փոխարինել ստեղծագործական ընդօրինակութեամբ (արտագրութեամբ) *(այս մասին մանրամասն տեսնել երկրորդ դասարանի ծրագիրին մէջ):*

Յիշենք. Ստեղծագործական ընդօրինակութիւնները ոչ միայն կը զարգացնեն աշակերտներուն ուղղագրական կարողութիւնները՝ դարձնելով հմտութիւն, այլեւ ուշադրութիւնը, յիշողութիւնը, կամքը, ստեղծագործական մտածողութիւնը եւ երեւակայութիւնը:

6.3. ԻՆՔՆԱԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ

- Զարգացնել գոց սորված բանաստեղծութեան մէկ-երկու տուները ինքնաթելադրութեամբ գրելու երեխաներու

կարողութիւնը:

Ընտրել այնպիսի բառատող, որ երկրորդ դասարանի համեմատ պարունակէ ամէլի շատ բառեր եւ կէտադրութիւն:

6.4. ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ

• Թելադրութեամբ գրել սորված ուղղագրական արժէք ունեցող բառեր պարունակող (5-7 բառ) բնագիր: Ամբողջ թեքսթին բառաքանակը՝ 20-25 բառ (տարեվերջը), իսկ տարեսկիզբը՝ 13-15 բառ:

• Թելադրութիւն գրելու կարողութեան զարգացման համար երկու շաբաթը անգամ մը գրել ուսուցողական (բացատրական) թելադրութիւն (3-4 նախադասութիւն), իսկ եռամսեան անգամ մը՝ ստուգողական (3-4 ուղղագրական արժէք ներկայացնող բառ): *(Թելադրութեան մեթոտաձեւին մասին տեսնել երկրորդ դասարանի ծրագիրին մէջ):*

6.5. ՓՈՒՍԱԴՐՈՒԹԻՒՆ

• Փոխադրութեան ուսուցողական արժէքի բարձրացման նպատակով կարելի է աշակերտները նախապէս զգուշացնել, թէ որ պատմութիւնը պէտք է գրեն եւ յանձնարարել նախապատրաստուիլ:

• Կիսամեակը անգամ մը (տարին երկու անգամ) փոխադրութեամբ գրել երեխաներուն անձանօթ փոքրիկ պատմութիւն մը:

Յիշենք. երեխաները փոխադրութիւնը պէտք է գրեն հանգամանօրէն նախապատրաստուելէն յետոյ: Երրորդ դասարանին մէջ փոխադրութեան նիւթը պէտք է ըլլայ փոքրիկ պատմութիւն մը, դէպքի մը մասին, որուն մասնակցած են 1-2 գործող անձեր: Պատմութիւնը պէտք է ըլլայ երեխաներու, ընտանիքի կամ կենդանական աշ-

խարհի մասին:

(Փոխադրութեան մեթոտաձեւին մասին մանրամասն տեսնել երկրորդ դասարանի ծրագիրին մէջ):

6.6. ՆԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ ՆԿԱՐԻ ՇՈՒՐՋ

- Ամրապնդել նկարի շուրջ պատմութիւն հիւսելու երեխաներուն կարողութիւնը:

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ Նկարի շուրջ պատմութիւն հիւսելու եւ զայն գրի առնելու կարողութեան ձեւաւորումը երեխաները կը նախապատրաստէ շարադրութիւն գրելուն: Նկարը, որուն շուրջ երեխաները պէտք է կառուցեն փոքրիկ պատմութիւն մը, պէտք է ունենայ երեխաներուն ծանօթ բովանդակութիւն: Կարելի է նոյնիսկ ընտրել դասագիրքին մէջ զետեղուած նկարներէն կամ կարդացած ստեղծագործութեան կից տրուած նկարազարդումներէն պատկեր մը: Բոլոր պարագաներուն, երեխաները արդէն նախորդ դասարաններէն ունին նկարը պատմելու փորձ:

- Երեխաներուն սորվեցնել ուշադիր դիտել շարադրութեան համար ընտրուած նկարը, անուններ դնել նկարին մէջ պատկերուած հերոսներուն, կենդանիներուն, որոշել, թէ ինչ կ'ընեն անոնք: Այնուհետեւ ուսուցիչին հարցադրումներուն օգնութեամբ պէտք է պատմուի նկարին բովանդակութիւնը:

Նկարին շուրջ շարադրութիւն գրելու գործընթացին մեթոտական շղթան

1. Նկարի դիտում
2. Հարցերու օգնութեամբ նկարի բովանդակութեան

պատմում:

3. Շարադրության մէջ գործածելու համար անհրաժեշտ բառամթերքի գրատախտակի վրայ գրառում, ուղղագրական պարզաբանում:
4. Պատմության ծրագրի (փլան) կազմումը եւ ըստ այդ ծրագիրին՝ պատմության պատմումը:
5. Շարադրության վերնագրում:
6. Շարադրության գրում:
7. Ինքնաստուգում:

Կիսամեակը անգամ մը գրել մէկ շարադրութիւն:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Աշակերտը կը հասկնայ ստեղծագործական ընդօրինակութեան համար նախատեսուած վարժութեան առաջադրանքի յանձնարարականը եւ զայն կը կատարէ հիմնականին մէջ՝ անսխալ:

2. Կրնայ ինքնաթելադրութեամբ գրել նախապէս գոց սորված բանաստեղծութեան (ուսուցիչի ընտրութեամբ) քառատող մը, պահպանելով այդ քառատողին մէջ եղած բառերուն ուղղագրութիւնը եւ կէտադրութիւնը:

3. Կը գրէ անցած ուղղագրական արժէք ներկայացնող 4-6 բառ պարունակող բնագիրը ուսուցիչին նախապատրաստական աշխատանքէն յետոյ (15-18 բառ):

4. Մանրամասն նախապատրաստումէն յետոյ փոխադրութեամբ կը գրէ (4-5 նախադասութիւն) ուսուցիչին ընթերցած ծանօթ կամ անծանօթ փոքրիկ պատմութեան բովանդակութիւնը:

5. Նկարի շուրջ կը կառուցէ փոքրիկ պատմութիւն մը, նախ բանաւոր, ապա ուսուցիչին կազմած ծրագիրին օգնութեամբ զայն գրի կ'առնէ:

7. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԷՔՆԵՐՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

- Դասագիրքին մէջ զետեղուած գեղարուեստական ստեղծագործութիւններու եւ պատմական ու աշխարհագրական ստեղծագործութիւններու ընթերցանութեան եւ անոնց շուրջ վերլուծական-դատողական աշխատանքի ընթացքին բացայայտել անոնց բարոյախրատական կողմերը եւ զանոնք դարձնել աշակերտներու արժէքներու եւ անձնային որակներու բաղադրիչները՝ յարգանք տարէցներու նկատմամբ եւ հոգատարութիւն ծերերու եւ երեխաներուն հանդէպ, հիւրասիրութիւն, հանդուրժողականութիւն, համախմբուածութիւն, հայրենասիրութիւն, եւայլն:

- Ազգային ամանդական տօներու, ծիսակատարութիւններու, ամանդոյթներու մասին պատմելու եւ զանոնք նշելու, անոնց մասին նիւթերու ընթերցումի ճամբով ձեւաւորել հետաքրքրութիւն ու սէր, ազգային մտածողութիւն՝ զանոնք համարելով ազգապահպան առաջնահերթութիւններ:

- Զարգացնել եւ ամրապնդել բարեկիրթ վարուելակերպի կանոններու գիտակցական կիրառում, քաղաքավարի վերաբերմունք ընկերներուն, ուսուցիչներուն, ընտանիքի անդամներուն եւ շրջակայ միջավայրի նկատմամբ:

- Դաստիարակել հետաքրքրութիւն կենդանի եւ անկենդան բնութեան նկատմամբ, ձեւաւորել բնութեան պահպանութեան, զայն որպէս առողջ միջավայրի ապահովման կարեւոր գործօնի գիտակցութիւն:

- Պարզ տեղեկութիւններ հաղորդել երկիրի եւ հայրենիքի հասարակական-քաղաքական երեւոյթներու, արժէքներու մասին (հայրենիք, մայրաքաղաք, նախագահ, օրհներգ, զինանշան, դրօշ, եայլն):

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Աշակերտը կը գիտակցի իր ազգային պատկանելիությունը, կը խօսի, կը գրէ, կը կարդայ իր մայրենի լեզուով, կը գիտակցի հայոց լեզուով խօսելու, գրելու եւ կարդալու կարեւորութիւնը ազգապահպանութեան գործընթացին մէջ:

2. Գիտէ հիմնական ազգային եւ քրիստոնէական տօներու, սովորութիւններու եւ ամանդոյթներու մասին, անոնց բովանդակութեան եւ իմաստներուն մասին ունի պարզ տեղեկութիւններ:

3. Կը գիտակցի, թէ ինչ է ընկերութիւնը, ունի մտերիմ դասընկերներ, կրնայ պահպանել անոնց հետ բարեկիրթ, փոխօգնութեան, հանդուրժողականութեան յարաբերութիւններ:

4. Մեծերուն նկատմամբ կը ցուցաբերէ հոգատարութիւն, կ'օգնէ իրմէ փոքրերուն, կը դրսեւորէ հիւրասիրութեան, բարեկրթութեան կանոններուն համապատասխան վարք:

5. Գիտէ իր բնակավայրին եւ հայրենիքին մասին մատչելի հիմնական տեղեկութիւններ (նախագահ, հայրենիք, մայրաքաղաք, դրօշ, օրհներգ, խորհրդանիշ, կը հետաքրքրուի երկրէն ներս եւ իր հայրենիքին մէջ կատարուող մատչելի տեղեկութիւններով (տօնակատարութիւններ, միջոցառումներ, հանդիպումներ, եւայլն):

Դ.

ՀՈՐԻՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ



«Աերածնունդ», Գրիգոր Խանճեան

1. ԸՆԹԵՐՑՈՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ ԵՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ

1.1. ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

• Հմտութեան հասցնել անծանօթ բնագիրները (ինչպէս դասագիրքի, այնպէս ալ այլ նիւթեր) հասկնալով, արտայայտիչ եւ սահուն կարդալու աշակերտներու կարողութիւնը (կարդալու կարողութեան բարձր մակարդակ):

Յիշենք. Կարդալու որակական յատկանիշներուն մասին մանրամասն տրուած է երկրորդ դասարանի ծրագիրին մէջ:

1.2 ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՆՆԵՐՈՒ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ

• Զարգացնել եւ ամրապնդել կարդացած ստեղծագործութեան **գաղափարը, բարոյագիտական** եզրակացութիւնը հասկնալու, անոնց մասին խօսած ժամանակ նշուած բառերը հասկնալով գործածելու երեխաներու կարողութիւնները:

• Հմտութեան հասցնել կարդացած ստեղծագործութիւններու գործող անձերուն կերպարները ներկայացնելու, բնութագրիչները համեմատութեան մէջ դնելու այլ ստեղծագործութիւններու գործող կերպարներուն հետ, անոնց մասին քանի մը դատողական նախադասութիւն կառուցելու երեխաներու կարողութիւնները:

• Զարգացնել գործնականօրէն տարբերել հեքիաթը, պատմուածքը, բանաստեղծութիւնը, առակը, ասացուածքը, առածը, հանելուկը, շուտասելուկը եւ 1-2 նախադասութիւններով զանոնք բնորոշելու երեխաներու կարողութիւնը:

• Ձեւաւորել կարդացած ստեղծագործութիւններու հեղինակներու կեանքի որոշ (մատչելի) տեղեկութիւններով հետաքրքրուելու, կարդալու, այդ մասին դասարանին առջեւ հանդէս գալու, գրականութեան տետրակին մէջ գրելու, առանձին հեղինակներուն նուիրուած պաստառներ պատրաստելու, անոնց յայտնի խօսքերը գոց սորվելու ունակութիւններ:

1.3 ԿԱՐԴԱՑԱԾ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱՐՏԱԴՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

• Զարգացնել եւ հմտութեան աստիճանի հասցնել կարդացած ստեղծագործութիւնը առանց ուսուցիչի օգնութեան (տունը ինքնիւրոյն նախապատրաստուելէ յետոյ) պատմելու աշակերտներուն կարողութիւնը:

• Ձգտիլ, որ աշակերտները պատմած ատեն գործածեն հեղինակին բառերը, միտքերը, մանրամասն ներկայացնեն նկարագրութիւնները (բնութեան, մարդու արտաքինը, բնակարանը, կահաւորումը, եւայլն):

ՉՄՈՒՆԱՆՔ. Աշակերտին բառամթերքը կը հարըստանայ, երբ ան կ'իւրացնէ, կը հասկնայ եւ պատմած ատեն կը գործածէ կարդացած ստեղծագործութեան ուշագրաւ հատուածները, մինչ այդ իրեն անծանօթ բառերը եւ արտայայտութիւնները:

• Ձեւաւորել կարդացած ստեղծագործութեան գաղափարին, հիմնական միտքին համապատասխան առած

կամ ասացուածք յիշելու եւ ըսելու, զարգացնել կարդացած ստեղծագործութեան նոր խորագիր դնելու աշակերտներու կարողութիւնները:

1.4 ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

- Զարգացնել երեխաներու՝ գիրք, օրաթերթ, ամսագիրներ ընթերցելու, մշտական լրացուցիչ նիւթեր ընթերցելու աշակերտներու ձգտումը: Այդ նպատակով յաճախակի անդրադառնալ աշակերտներու արտադասարանային ընթերցանութեան՝ անոր տրամադրելով դասէն 5-10 վայրկեաններ:

- Պահել գրականութեան տետրակ՝ օրագիր, ուր փակցնել գրողներու նկարներ, ընդօրինակել անոնց ճանչցուած, իմաստուն խօսքերը, փակցնել կամ գրել լրացուցիչ նիւթեր:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՁԻ ՀԱՄԱՐ


1. Աշակերտը թէ՛ ծանօթ, թէ՛ անծանօթ (տարիքին յարմար) նիւթերը կը կարդայ յստակ, սահուն, հասկնալով եւ արտայայտիչ:

2. Կրնայ պատմել իր կարդացածը՝ հարազատ մնալով բնագիրին՝ գործածելով հեղինակին բառերը (բանալի բառերը):

3. Կ'որոշէ կարդացած ստեղծագործութեան գաղափարը, այդ մասին դատողութիւններ կ'ընէ, գործող անձերը կը համեմատէ նախապէս կարդացած ստեղծագործութիւններու հերոսներուն հետ:

4. Կրնայ կարդացած ստեղծագործութեան նոր խորագիր դնել՝ հիմնաւորելով իր ընտրութիւնը:

5. Գիտէ առածներ, ասացուածքներ եւ զանոնք կրնայ



ընտրել ըստ իր կարգացած ստեղծագործության գաղափարին:

6. Ունի արտադասարանային ընթերցանության ուղղութեամբ հետաքրքրություններ, իր ընտրութեամբ կամ ուսուցիչի յանձնարարութեամբ կ'անդրադառնայ թերթային, ամսագրային նիւթերու, կը կարդայ մանկական գիրքեր:

2. ԽՕՍՔ, ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

2.1. ԲԱՌԱՄԹԵՐՔԻ ՀԱՐՍԱՑՈՒՄ

• Բառամթերքը հարստացնել թեմաթիք բառախումբերով (օրինակ՝ «Ձմեռը նկարագրող բառախումբ», «Հայրենիք-հայրենասիրություն», «Ընկերասիրություն», «Մարդու արտաքինը ներկայացնող բառեր», «Մարդու ներքինը ներկայացնող բառեր», եւայլն):

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ. Թեմաթիք խումբերով, այսինքն, որոշակի թեմայի մը շուրջ բառախումբեր ստեղծելու եւ աշակերտներուն սորվեցնելու աշխատանք կարելի է իրականացնել, հիմք ընդունելով նաեւ դասագիրքին մէջ տեղ գտած նիւթերը:

Ներկայացնենք «Մարդու արտաքինը ներկայացնող բառախումբ»ի կազմումի ընթացքը:

Նախ երեխաներուն անհրաժեշտ է սորվեցնել, որ մարդուն արտաքինը ներկայացնելուն համար պէտք է բառախումբ կազմէ, սկսելով անոր առանձին մասերէն. աչքերը, մազերը, դէմքը, պարանոցը՝ վիզը, կեցուածքը, իրանը, ոտքերը, եւայլն: Այսպէս, օրինակ՝

Մարդուն արտաքինը ներկայացնող բառեր

Մազերը - փարթամ, գանգրահեր, երկար, առողջ, ալեգարդ, ձերմակահեր, փայլուն, շիկահեր, սեւաթոյր, դեղձան, եւայլն:

Աչքերը - կապուտաչեայ, թուխ, նշաձեւ, բարի,

խելացի, թախծոտ, խորամանկ, խաժակն, հուր աչքեր (տաք, ջերմ, աշխոյժ, հոսկէ ալ՝ հրաչեայ բառը, որ նաեւ յատուկ անուն է՝ Հրաչեայ), մեծ, կլոր, խոնաւ, խոհուն, նրբանկատ, եւայլն:

Դէմքը - բարեդէմ, ձերմակ, կլոր, հաւթաձեւ, ժպտուն, կիրթ, բարի, չար, խորամանկ, եւայլն:

Վիզը - երկարաձիտ, բարակ, հաստավիզ, նրբին, կարճ, եւայլն:

Ասոնք կը կոչուին բառախումբեր եւ ասելի դիւրին է աշակերտներուն համար բառերը մտապահել ըստ խումբերու եւ գործածել անհրաժեշտութեան պարագային:

- Պահել բառատետրակ մը եւ կարդացած ստեղծագործութենէն կամ այլ ձամբով սորված նոր բառերը (անոնց շարքին՝ ուղղագրական արժէք ներկայացնող) գրել անոնց մէջ եւ սորվիլ՝ անընդհատ անդրադառնալով անցածին:

2.2. ԲԱՆԱԻՈՐ ԽՕՍՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ, ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

- Ամէնօրեայ խօսակցութիւն իրականացնել, դասագիրքէն կարդացած ստեղծագործութիւններու շուրջ՝ աշակերտները ներգրաւելով երկխօսութիւններու, դատողութիւններու ոլորտ:

- Ձեւաւորել պատմողական, դատողական, նկարագրական եւ գնահատող խօսք կառուցելու կարողութիւն եւ խօսքին մէջ անոնցմէ իրաքանչիւրը գործածելու պարզ ունակութիւն:

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՅՈՒՅՈՒՄ. Պատմողական խօսք աշակերտները կը կառուցեն առանց դժուարութեան. կը պատմեն պատմողական նախադասու-

թիւներով այն ամէնը, ինչ տեսած են, զգացած են, կատարած են՝ առանց վերլուծելու, առանց սեփական վերաբերմունքին:

Դատողական խօսքին ժամանակ խօսողը ոչ միայն կը պատմէ, այլև կը կատարէ վերլուծութիւններ (կը վերլուծէ, կը քննէ կատարուածը), դատողութիւններ կը կատարէ (ճիշդի եւ սխալի, արդարի եւ անարդարի մասին):

Նկարագրական խօսքը հիմնականին մէջ կը ներկայացնէ բնութեան, երեւոյթներու, առարկաներու, բնակարանի, մարդուն արտաքին տեսքը՝ նկարագիրը, գործածելով համապատասխան բառեր, արտայայտութիւններ (ածականներ, մակդիրներ, փոխաբերութիւններ, եւայլն):

Գնահատող խօսքի միջոցով խօսողը ոչ միայն կը պատմէ, կը նկարագրէ, դատողութիւններ կ'ընէ, այլև կը ներկայացնէ իր գնահատականը համապատասխան բառերով, արտայայտութիւններով (*ճիշդ է, սխալ է, հրաշալի է, դիպուկ է, աննրբանկատ է, նրբանկատ է, անդաւաճան է, եւայլն*):

ՅԻՇԵՆՔ. Սովորաբար, մարդ՝ գնահատող խօսք կառուցած ժամանակ կը փորձէ ընտրել այնպէս բառեր, որոնք վիրատորական չըլլան, ըլլան բարեկիրթ, քաղաքավարի: Միաժամանակ գնահատող կամ դատողական խօսք կառուցած ժամանակ պէտք է ընդգծուած ըսել՝ իմ կարծիքովս, որովհետեւ խօսողը, իրօք, իր կարծիքը կ'արտայայտէ:

• Ձեւտորել առաջարկուած թեմային շուրջ բանավիճելու, երկխօսութեան մէջ մտնելու, տուեալ թեմայի շուրջ նախապէս նիւթեր հաւաքելու, փաստեր եւ թիւեր կուտա-

կելու, համապատասխան բառամթերք ընտրելու եւ զանոնք բանավիճած ատեն ճիշդ կերպով գործածելու կարողութիւն: Որպէս բանավէժի թեմայ կարելի է ընտրել կարդացած ստեղծագործութիւններուն գաղափարը, ընկերային յարաբերութիւններու, ազնուութեան, բարութեան նիւթերը: Օրինակ՝ ազատ ընթերցումի համար նախատեսուած «Խնդրանք» («Հայրենի Կարկաչ») պատմական նիւթի ընթերցումէն յետոյ քննարկումի փոխարէն կարելի է կազմակերպել բանավէժ մը՝ «*Ինչ կ'ըլլար, եթէ Մովսէս Խորենացին չհամաձայներ Սահակ Բագրատունիին խնդրանքին հետ եւ չգրեր «Պատմութիւն հայոց»ը թեմայով: Կարելի է նաեւ բանավէժի նիւթ դարձնել «Կէս խնձոր» պատմուածքը («Հայրենի Կարկաչ») քննարկումի թեմայ առաջարկելով «Ինչպէս կը ծնի ընկերութիւնը»:*

ՅԻՇԵՆՔ. *Որեւէ թեմայի շուրջ բանավէժը կարելի է կազմակերպել զայն ըստ ամենայնի ուսումնասիրելէ յետոյ միայն: Բանավէժի թեման պէտք է գրուի գրատախտակին վրայ կամ փակցուի պատին վրայ: Բանավէժը պէտք է տեւէ մէկ դասաժամի սահմաններուն մէջ, եւ աշակերտներուն պէտք է տրուի ազատ արտայայտուելու հնարատրութիւն: Բանավէժը կարելի է կազմակերպել ոչ միայն մէկ, այլ երկու զուգահեռ դասարաններուն մէջ: Բանավէժին պէտք է երեխաները նախապատրաստել: Խօսքի զարգացումի եւ հաղորդակցական կարողութիւններու ձեւատրումի աշխատանքներուն մասին առաւել մանրամասն ցուցումները տեսէք երրորդ դասարանի ծրագիրին մէջ:*

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՔՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՁԻ ՀԱՄԱՐ

1. Աշակերտը կրնայ ինքնիրոյն կամ ուսուցիչին օգնութեամբ բացատրել իր կարդացած ստեղծագործու-

թիւներուն անձանօթ բառերը, զանոնք կը գործածէ խօսքին մէջ (բանաւոր կամ գրաւոր):

2. Ունի թեմաթիք խումբի բառամթերքի որոշակի բառապաշար (անցած թեմաներէն), անհրաժեշտութեան պարագային զանոնք կը մտաբերէ եւ կը գործածէ խօսքին մէջ:

3. Ազատ կը հաղորդակցի իր տարեկիցներուն եւ շրջակայ մեծերուն հետ, պահպանելով բարեկիրթ հաղորդակցութեան կանոնները:

4. Կրնայ քննարկել իր կարդացած ստեղծագործութիւններուն նիւթը, գործող անձերուն գործողութիւնները, վարքը կառուցելով ինչպէս պատմողական, այնպէս ալ դատողական եւ գնահատող խօսքեր:

5. Կրնայ առաջարկուած թեմայի շուրջ երկխօսութիւններու մէջ մտնել համադասարանցիներուն հետ, հանդէս գալ բանավէճերուն մէջ, պահպանելով խօսքի բարեկիրթ մշակոյթ:

3. ԼԵԶՈՒԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՑՈՒՄ

3.1. ԿՐԿՆԵԼ ԵՒ ԱՄՐԱՊՆԴԵԼ 3-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՈՒՆԵՑԱԾ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

- նախադասության տեսակները ըստ երանգի,
- առոգանության եւ կէտադրության նշանները,
- տրուած բառախումբերը նախադասության մէջ գործածելու երեխաներուն կարողութիւնները:

• Գաղափար տալ ըստ կազմութեան նախադասութիւններուն մասին (պարզ, բարդ, պարզ համառօտ, պարզ ընդարձակ): Ձեւաորել պարզ համառօտ նախադասութիւնը պարզ ընդարձակ, երկու պարզ նախադասութիւնը շաղկապի միջոցով բարդ դարձնելու կարողութիւններ:

• Գաղափար տալ նախադասութեան գլխաւոր (ենթակայ, ստորոգիչ) եւ երկրորդական անդամներուն մասին: Ձեւաորել հարցերու միջոցով ենթական եւ ստորոգիչը որոշելու կարողութիւն՝ ենթակայէն երթալով ստորոգիչին:

Օրինակ՝ ներկայացնենք նախադասութիւն մը վերլուծելու գործընթացը:

Ճերմակ ձիւնը ծածկեց հայոց սարերը:

Ի՞նչը ծածկեց հայոց սարերը (ձիւնը - ենթակայ):

Ձիւնը ի՞նչ ըրաւ հայոց սարերը (ծածկեց - ստորոգիչ):

Ո՞ր ձիւնը ծածկեց հայոց սարերը (ձերմակ - ենթակայի լրացում):

Ձիւնը ձր սարերը ծածկեց (հայոց - ստորոգիչի լրացում):

ՅԻՇԵՆՔ. Նախադասութիւնը շարահիւսօրէն վերլուծած ժամանակ աշակերտին պէտք է օգնէ հարց-միջնորդը (օգնականը):

Հարցը պէտք է տալ ամբողջական նախադասութիւններով, պատասխանը պէտք է հնչէ ամբողջական նախադասութիւններով:

• Ձեւաւորել պարզ ընդարձակ նախադասութեան գծապատկերը գծելու եւ ըստ գծապատկերին նախադասութիւն կազմելու աշակերտներուն կարողութիւնը:

• Գաղափար տալ ենթակայի եւ ստորոգիչի դէմքով եւ թիւով համաձայնութեան մասին:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՁԻ ՀԱՄԱՐ

1. Աշակերտը կրնայ կազմել ըստ երանգի տարբերութեան նախադասութիւններ, կրնայ խօսքին մէջ զանոնք գործածել եւ բնագիրին մէջ տարբերել:

2. Կը տարբերէ նախադասութիւնները ըստ կազմութեան, կը կազմէ եւ կը խօսի բարդ եւ պարզ ընդարձակ նախադասութիւններով, կը գծէ անոնց գծապատկերները, տրուած գծապատկերներով կըրնայ կազմել համապատասխան նախադասութիւններ:

3. Կրնայ հարցերու միջոցաւ որոշել պարզ ընդարձակ նախադասութեան գլխաւոր եւ երկրորդական անդամները:

4. Խօսքի (բանաւոր եւ գրաւոր) մէջ կրնայ պահպանել ենթակային եւ ստորոգիչին համաձայնութիւնը դէմքով եւ թիւով:

4. ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ - ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ

4.1. ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ

- Կրկնել եւ ամրապնդել նմանաձայն բառերուն մասին երեխաներու ունեցած գիտելիքները եւ կարողութիւնները:

- Ամրակայել հոմանիշներու եւ հականիշներու մասին աշակերտներու ունեցած գիտելիքները եւ կարողութիւնները: Բառամթերքը հարստացնել հոմանիշային շարքերով:

- Երեխաներուն մէջ ձեւաւորել բառին նկատմամբ հետաքրքրութիւն՝ խթանելով նոր բառերուն իրացումը, ուշագրաւ բառերու պատմութեան ուսումնասիրումը եւ բառահաւաքը:

4.2. ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ

- Կրկնել եւ ամրապնդել բառին կազմութեան մասին աշակերտներու ունեցած գիտելիքները եւ կարողութիւնները (արմատ, ածանց, յօդակապ):

- Ձեւաւորել եւ զարգացնել որեւէ բառ ըստ կազմութեան վերլուծելու, բառին բաղադրիչները վերծանելու, առանձին բաղադրիչներով նոր բառեր կազմելու աշակերտներու կարողութիւնները:

Յիշենք. Բառակազմական վերլուծութիւնը կը նպաստէ ոչ միայն բառի մասին աշակերտներու գիտելիքներու հարստացումին, բառամթերքի ընդլայնումին եւ հայերէն բառերու ծագումնաբանական գիտելիքներու նկատմամբ հետաքրքրութեան ձեւաւորումին, այլեւ կը զարգացնէ աշակերտներու վերլուծական մտածողութիւնը, կը սորվեցնէ ընդհանրապէս առարկաները եւ երեւոյթ-

ները վերլուծել, համադրել, ընդհանրացումներ կատարել մասնատր առիթներու կապակցութեամբ: Ասոնք կարելոր կարողութիւններ են, որոնք աշակերտներուն հարկաւոր են ոչ միայն ուսումնական գործունէութեան ծաւալումին, այլեւ իրենց ողջ կեանքին ընթացքին:

• Կրկնել եւ ամրապնդել սուղ ը-ի մասին աշակերտներու ունեցած գիտելիքները եւ կարողութիւնը. մասնատրապէս ձեւաւորել տողադարձի ժամանակ սուղ ը-ի գործածութեան կարողութիւնը՝ զայն հասցնելով հմտութեան:

ԶԱՓՈՐՈՇԻԶԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՁԻ ՀԱՄԱՐ

1. Աշակերտը կրնայ նշել անցած նմանաձայն բառերը եւ գրած ատեն կը պահպանէ անոնց ուղղագրութիւնը:

2. Գիտէ տարուան ընթացքին սորված հոմանիշ եւ հականիշ բառերը, ուսուցիչին առաջարկով կրնայ թուարկել անոնց մեծ մասը:

3. Կրնայ կատարել ծանօթ (սորված) բառերու բառակազմական վերլուծութիւն (արմատ, ածանց, ա յօդակապ), տրուած արմատով կը կազմէ բառեր:

4. Գիտէ սուղ ը-ի մասին, բառը տողադարձի համար վանկատած ժամանակ կ'որոշէ սուղ ը-ին վանկը:

5. ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

- Ամրապնդել երրորդ դասարանին սորված ուղղագրական արժեք ներկայացնող բառերը ձիշդ գրելու աշակերտներու կարողութիւնը: Ընդարձակել աշակերտներու միջոցաւ (ուսուցիչին ղեկավարութեամբ) ուղղագրական պատաստներ պատրաստելու աշխատանքները:

- Ամբողջացնել հայերէնի երկինչիւններուն ուղղագրութիւնը եւ ուղղախօսութիւնը (ձիշդ կարդալ եւ արտաբերել):

- Սորվեցնել **ո** տառը բառասկիզբը (*վօ*) ձիշդ արտասանելու եւ գրելու, ինչպէս նաեւ՝ վ-էն առաջ *օվ* հնչելու, բայց **ո** գրելու կանոնները եւ համապատասխան բառերը ձիշդ գրելու ուղղագրութիւնը:

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ. Ուղղագրական արժեք ներկայացնող բառերուն շուրջ աշխատանք պէտք է տանիլ իւրաքանչիւր օր՝ յարմար առիթի պարագային: Այդ աշխատանքը պէտք է տարուի ոչ միայն ընդօրինակութիւններու, այլեւ թելադրութիւններու, փոխադրութիւններու եւ փոքրիկ շարադրութիւններու միջոցաւ: Ընդօրինակութիւններու ժամանակ աշակերտը կը յիշէ բառը եւ կը գրէ ձիշդ տառը: Թելադրութիւններու, փոխադրութիւններու եւ շարադրութիւններու ժամանակ աշակերտը իր սորված ուղղագրական արժեք ներկայացնող բառերը կը գործածէ գրաւոր խօսքին մէջ (անշուշտ, նախապատրաստումէն յետոյ):

ՅԻՇԵՆՔ. Ուղղագրութիւնը կը դառնայ աշակերտի սեփականութիւնը, երբ ան ոչ միայն անընդհատ կը գրէ, այլեւ երբ այդ բառերը մշտապէս անոր աչքին առջեւն են կը տեսնէ ու կը կարդայ:

6. ՁԵՒԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

6.1. ԳՈՅԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՈՒՆԵՑԱԾ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԽՈՐԱՑՈՒՄ

- Ամրապնդել երրորդ դասարանին գոյականի մասին աշակերտներու ունեցած գիտելիքները եւ կարողութիւնները:

- Խորացնել եւ ամրապնդել գոյականի եզակի եւ յոգնակի թիւերուն մասին աշակերտներու ունեցած գիտելիքները եւ կարողութիւնները, հմտութեան մակարդակի հասցնել եզակի թիւի գոյականները յոգնակի (եւ հակառակը) դարձուցած ատեն ուղղագրական կանոններու գործածութիւնը:

- Ընդարձակել յատուկ անուններու մասին աշակերտներու ունեցած գիտելիքներու սահմանները, գրագիտութիւնը այդ ոլորտին մէջ հասցնել հմտութեան (անուն, մականուն, քաղաքի, գիւղի, ծովերու, լիճերու, գետերու, սարերու եւ կենդանիներուն տրուող անունները):

- Ամրապնդել գոյականի հոլովումը:

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ. Գոյականի բոլոր յատկանիշներուն (թիւ, յատուկ եւ հասարակ, հոլովում, եայլն) իւրացումը արդիւնաւէտ է իրականացնել ոչ միայն զատ վերցուցած, այլ գոյականը գործածելով նախադասութեան մէջ կամ խօսքին մէջ: Այս պարագային աշակերտները ոչ միայն կը

սորվին գոյականի քերականական յատկանիշները, այլև կ'ըմբռնեն, որ իրօք անիկա մեր կառուցած խօսքին մէկ մասն է, եւ անոր հետ կապուած կանոնները անոր համար են, որ խօսքին մէջ ձիշդ գործածենք:

6.2 ԲԱՅԻ ՄԱՍԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄ

- Կրկնել եւ ամրապնդել բայի մասին երրորդ դասարանին աշակերտներու ձեռք բերած գիտելիքները եւ կարողութիւնները: Զարգացնել եւ հմտացնել նախադասութեան եւ խօսքին մէջ գործածուած բայերուն դէմքը, թիւը, ժամանակը, լծորդութիւնը հարցումներու միջոցաւ որոշելու աշակերտներու կարողութիւնները:

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՅՈՒՅՈՒՄ. Դարձեալ կարելորել եւ բայի որեւէ յատկանիշի շուրջ աշխատանք տարած ատեն մշտապէս գործածել հարցադրումը՝ զայն կապելով այն գոյականին հետ, որ կը կատարէ տուեալ գործողութիւնը: *Օրինակ՝ Ի՞նչ ըրաւ Դաւիթը, երբ հանդիպեցաւ Յասմիկին:* Աշակերտները հմտացնել հարցադրումները ձիշդ իրականացնելու մէջ:

- Խորացնել եւ ամրակայել բայի ժամանակի մասին աշակերտներուն գիտելիքները եւ կարողութիւնները (ներկայ, անցեալ, ապառնի, անցեալ կատարեալ, անցեալ անկատար, անցեալ ապառնի):

- Գաղափար տալ բայի հրամայական եղանակին մասին: Սորվիլ եւ զարգացնել հրամայական եղանակի հաստատական եւ ժխտական ձեւերու, անոնց շեշտադրումի մասին աշակերտներու գիտելիքները, զանոնք վերածել կարողութեան՝ վարժութիւններու կատարումի ճամբով:

ՅԻՇԵՆՔ. Ինչպէս մնացած խօսքի մասերուն, այնպէս ալ բային յատկանիշներու ուսումնասիրութիւնը շահեկան է իրականացնել նախադասութիւններուն եւ խօսքի նմուշներու վրայ: Այս պարագային աշակերտները կը համոզուին, որ քերականութիւնը մեր խօսքին անքակտելի մասն է, ոչ թէ պարզապէս, խօսքէն դուրս գոյութիւն ունեցող գիտական սահմանումներ:

6.3 ԱԾԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ

- Կրկնել եւ ամրապնդել ածականի մասին աշակերտներու գիտելիքները եւ կարողութիւնները՝ քերականական հարցումը մշտապէս գործածելով որպէս ածական անունը որոշող միջնորդ-օգնական:

- Ձեւաւորել եւ զարգացնել ածականին տրուող հարցումը գոյականէն սկսելով, ապա պատասխանը ածականով տալու աշակերտներու կարողութիւնը: Օրինակ՝ **Երկինքին մէջ կը փայլին արծաթագոյն աստղերը** նախադասութեան մէջ ածականը որոշելու համար պէտք է հարցնել՝ **որ աստղերը կը փայլին երկինքին մէջ:** Պատասխանը՝ **կը փայլին արծաթագոյն աստղերը:**

- Աշակերտներու բառամթերքը հարստացնել ածականներով՝ գործնական վարժութիւններու մէջ գործածելով նաեւ անոր աստիճանները՝ **որակական, համեմատական եւ գերադրական** առանց այս եզրաբաները գործածելու: Պարզապէս ձգտիլ, որ երեխաները խօսքին մէջ գործածեն **աւելի բառը եւ ամենա մասնիկը:** Օրինակ՝ *Աննան աւելի լաւ կը պատմէ, քան Անին: Սերուժը մեր դպրոցի ամենաուժեղ մարզիկն է:*

6.4 ԳԱՂԱՓԱՐ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՄԱՍԻՆ

- Վարժություններու կատարումի միջոցաւ, գործածելով *քանի՞, որքան, քանի՞ երորդ, քանի՞ ական* հարցադրումները աշակերտներուն գաղափար տալ թուական անունին մասին:

- Զարգացնել խօսքին մէջ թուական անունին բոլոր տեսակները (քանակական, դասական, բաշխական) ձիշդ գործածելու երեխաներու կարողութիւնը՝ առանց այդ տեսակներուն անունը տալու:

ՅԻՇԵՆՔ. Գոյականի, բայի եւ ածականի նման երեխան նախադարձական տարիքին արդէն կը գործածէ թուականներ, հիմնականին մէջ քանակական (երկու, երեք, տասնչորս, եւայլն): Վարժություններ պէտք է կատարել, որոնք երեխային առաջադրեն գործածել նաեւ դասական (առաջին, չորրորդ, եւայլն) եւ բաշխական (երկուական, չորսական, եւայլն) թուականներ: Չմոռնանք՝ առանց անունները տալու:

- Աշխատանք տանիլ քանակական թուականներու ուղղագրութեան ուսուցումի ուղղութեամբ:

- Սորվեցնել բայը խոնարհել **հաստատական** եւ **ժխտական** եղանակներով՝ ըստ Ա. Բ. եւ Գ. դէմքերու:

- Պարզ գաղափար ձեւաւորել բայի՝ **անցեալ ապառնի** (հաստատական ձեւ՝ *ես գոհ պիտի ըլլայի*, ժխտական ձեւ՝ *ես գոհ պիտի չըլլայի*) եւ **անցեալ անկատար** (հաստատական ձեւ՝ *ես ուրախ էի*, ժխտական ձեւ՝ *ես ուրախ չէի*) բաղադրեալ ժամանակներուն մասին:

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ. Նշուած ժամանակներու հասկնալով իրացումը ապահովելու համար չափազանց կարեւոր է զանոնք որոշել եւ աշակերտներուն բացատրել կենդանի, առօրէական խօսքի նմուշի մը, խօսակցութեան, երկխօսութիւններու մէջ:

• Բացատրությունն ը ձայնատրի հնչյունափոխության մասին, երբ ներկայ ժամանակի պարագային անիկա կը հանդիպի մէկ այլ ձայնատրի (*կը երգեմ - կ'երգեմ, կ'որախանամ, եւայլն*):

• Տեղեկութիւն բայի խոնարհումի բացատրութեան մասին. չ-ով կազմուած բայի ժխտական ձեւի՝ ապաթարց առնելու մասին (*չի ուտեր - չ'ուտեր*):

6.5 ԳԱՂԱՓԱՐ ԴԵՐԱՆՈՒՆԻՆ ՄԱՍԻՆ

• Գաղափար տալ դերանունին՝ որպէս գոյականը փոխարինող բառերու մասին՝ գոյականը փոխարինող դերանունները խօսքին եւ նախադասութեան մէջ գործածելու ճամբով:

• Սորվեցնել, որ խօսքին մէջ դերանունները կը փոփոխուին ճիշդ այնպէս, ինչպէս գոյականները:

6.6 ԴԵՐԱՆՈՒՆԻՆ ՄԱՍԻՆ

ԱՆՃԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ

• Հարցադրումներու եւ խօսքին մէջ գոյականը դերանունով փոխարինելու ճամբով ամրապնդել երեխաներու գիտելիքները եւ կարողութիւնները դերանունին՝ որպէս գոյականը փոխարինող խօսքի մասի վերաբերեալ:

• Գաղափար տալ անձնական դերանուններու՝ որպէս անձնանուններու փոխարէն գործածուող դերանուններու մասին:

• Նախադասութեան մէջ հոլովուած գոյականները փոխարինելով համապատասխան դերանունով, աշակերտներուն ցոյց տալ, որ անձնական դերանունները կը հոլովուին ճիշդ այնպէս, ինչպէս այն գոյականները, որոնց անոնք կը փոխարինեն:

• Նախադասութիւններու մէջ դերանունները հոլովելով,

աշակերտները բերել այն եզրակացութեան, որ դերանունը ունի եզակի եւ յոգնակի թիւ, Ա, Բ, Գ դէմքեր: Ձեւաւորել եզակի եւ յոգնակի թիւերով եւ Ա, Բ, Գ դէմքերով հոլովելու աշակերտներու կարողութիւնը:

6.7 ԳԱՂԱՓԱՐ ԵԱՂԿԱՊԻ ՄԱՍԻՆ

- Պարզ նախադասութիւնները շաղկապի միջոցաւ իրար միացնելու եւ բարդ նախադասութիւն ստանալու ճամբով աշակերտները ծանօթացնել շաղկապին՝ որպէս նախադասութիւնները եւ բառերը զիրար կապող բառեր:

- Ձեւաւորել նախադասութիւնները համապատասխան շաղկապերով ամբողջացնելու կարողութիւն:

- Գաղափար եւ-էն եւ ու-էն առաջ ստորակէտը գործածելու մասին:

ՉԱՓՈՐՈՇԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Աշակերտը կրնայ հարցումներու միջոցաւ որոշել նախադասութեան մէջ գործածուած գոյականը, բայը, ածականը, թուականը, դերանունը եւ շաղկապը:

2. Կրնայ անցած խօսքի մասերը քերականական ճիշդ յատկանիշներով գործածել խօսքի մէջ:

3. Տարուան ընթացքին սորված ուղղագրական արժէք ներկայացնող բառերու ճնշող մեծամասնութիւնը ճիշդ կը գրէ:

4. Խօսքը հարուստ է ածականներով, կը գործածէ նաեւ ածականին համեմատական աստիճաններ ներկայացնող բառեր՝ առանց անունը տալու:

5. Կրնայ անաւարտ նախադասութիւնները ամբողջացնել գոյականներով, բայերով, ածականներով, թուականներով, դերանուններով եւ անցած (ծանօթ) շաղկապերով:

7. ԳՐԱԻՈՐ ԽՕՍՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

7.1. ՎԱՅԵԼՈՒՉ ԳՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ

- Շարունակել աշխատանքը վայելուչ ձեռագիրով գրելու կարողութեան ձեւաորումի ուղղութեամբ՝ հանդէս բերելով բժախնդիր պահանջկոտութիւն:

- Գրատոր խօսքը գնահատած ատեն կարելորել աշակերտներուն ձեռագիրը:

7.2. ԸՆԴՈՐԻՆԱԿՈՒԹԻՒՆ

- Ընդօրինակութիւնը որպէս գրատորի տեսակ գործածել «Հայրենի Կարկաչ» աշխատանքային տպագիր հիմքով տետրակին մէջ տրուած առաջադրանքները կատարած ատեն: Մնացած բոլոր դէպքերուն կիրառել միայն ստեղծագործական ընդօրինակութիւնը:

ՅիշենՔ. Ստեղծագործական ընդօրինակութեան ատեն աշակերտը ընդօրինակելուն զուգահեռ պէտք է կատարէ որեւէ լրացուցիչ առաջադրանք: Օրինակ, ընդօրինակել՝ եզակի թիով գոյականները դարձնելով յոգնակի: Կամ ընդօրինակել ընդգծելով բարդ բառերը, եայլն:

7.3. ԻՆՔՆԱԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ

- Տարին երկու անգամ գոց սորված բանաստեղծութիւնը (երկու փոքր քառատող) գրել ինքնաթելադրութեամբ:

7.4. ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆ

- Թելադրութեամբ գրել անցած ուղղագրական արժէք ունեցող բառեր պարունակող բնագիր (6-8 բառ): Ամբողջ թեքսթին բառաքանակը տարեսկիզբը՝ 15-20 բառ, տարեվերջը՝ 20-25 բառ:

- Ուղղագրական կարողութիւններու ամրապնդումի եւ թելադրութիւն գրելու կարողութեան զարգացումի նպատակով երեք շաբաթը անգամ մը գրել ուսուցողական թելադրութիւն, կիսամեան անգամ մը՝ ստուգողական թելադրութիւն: Շաբաթը անգամ մը գրել ուղղագրական արժէք ներկայացնող բառերը. ուսուցիչին բացատրութենէն յետոյ միայն թելադրութեամբ գրել:

Յիշեն՝Ք. Ուղղագրական արժէք ներկայացնող բառերը ձիշդ գրելու կարողութեան ձեւաորումի ամենալաւ միջոցը ուսուցողական (բացատրական) թելադրութիւնն է, որ կ'իրականացուի նախապատրաստական աշխատանքէն յետոյ: Միաժամանակ կը կարելորենք նշել, որ թելադրութիւնը կը նպաստէ կարդալու կարողութեան զարգացումին:

7.5. ՓՈՒՄԱԴՐՈՒԹԻՒՆ

- Կիսամեակը անգամ մը (տարին երկու անգամ) փոխադրութեամբ գրել երեխաներուն անձանօթ փոքրիկ պատմութիւն մը:

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ. Փոխադրութիւն կարելի է գրել նաեւ դասագիրքին մէջ զետեղուած փոքրածաւալ ստեղծագործութիւնը՝ զայն նախապէս բանաւոր պատմել սորվելէ յետոյ: Անձանօթ բնագիրը փոխադրութեամբ գրելէն առաջ պէտք է նախապատրաստել: Չորրորդ դասարանին եւս փոխադ-

րութեան համար ընտրուած պատմութիւնը պէտք է ունենայ 1-2 գործող անձեր, եւ պէտք է նկարագրուի դէպք մը:

(Փոխադրութեան ուսուցումի մեթոտիքայի մասին մանրամասն տես երկրորդ դասարանի ծրագիրին մէջ):

7.6. ԵԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

ա. Եարադրութիւն նկարաշարի մը շուրջ

• Նախապէս նկարաշարէն իւրաքանչիւրի շուրջ բծախնդիր աշխատանք տանելէն յետոյ գրել շարադրութիւն:

ՅիշենՔ. Նկարաշարին շուրջ տրուած հարցումները պէտք է գրուած մնան գրատախտակին վրայ, իսկ անոնց դիմաց անհրաժեշտ բանալի բառեր:

Նկարին շուրջ շարադրութիւն գրելու գործընթացին մեթոտիքան տրուած է երրորդ դասարանի ծրագիրին մէջ:

բ. Նամակ գրելու կարողութեան ձեւաւորում

Նշենք, որ նամակը կը պատկանի գործնական գրութիւններու շարքին, սակայն, ըստ էութեան, անոր բովանդակութիւնը կը շարադրուի ինքնիւրոյն:

• Սորվեցնել նամակ գրել կարողացած ստեղծագործութիւններու հերոսներուն մասին, հարցումներ տալ, խորհուրդներ տալ, եւայլն:

ՄԵԹՈՏԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄ. Յիշենք, որ երեխաները նամակ կը գրեն «կաղանդ պապայ»ին գրաձանաչ դառնալու առաջին իսկ օրերէն: Կը մնայ զարգացնել անոնց այդ կարողութիւնը: Կարողացած

ստեղծագործութեան հերոսին նամակ գրել յանձնարարելէն առաջ աշակերտներուն պէտք է դիմել, ըսելով. *Ի՞նչ կ'ըսէիք հերոսին, եթէ անոր հանդիպէիք կամ հեռաձայնային զրոյցի մէջ մտնէիք անոր հետ:* Պատմենք այդ մասի եւ որոշենք այն հարցումները, որոնց շուրջ պէտք է զրուցենք: Այնուհետեւ հարկաւոր է երեխաներուն սորվեցնել նամակին կառուցուածքը եւ լեզուն:

Ներկայացնենք չորրորդ դասարանի «Հայրենի Կարկաչ» դասագիրքին «Տարեդարձ» պատմուածքին շուրջ նամակ գրելու կարողութեան ձեւաւորումի գործընթացին քայլերը («Նամակ Ծաղկաթիթեռին»): Նշենք, որ նամակը պէտք է գրեն «Տարեդարձ» պատմուածքը ըստ ամենայնի կարդալէն, պատմելէն եւ քննարկելէն յետոյ: Այսինքն, երեխաները հասկըցած են, որ Ծաղկաթիթեռը ոչ միայն հիւրասէր է, այլ նաեւ բարի է, խոնարհ, խելացի եւ միշտ կը կատարէ մօր խորհուրդները: Այս ամէնէն յետոյ ուսուցիչը կը բացատրէ.

- *Երեխաներ, պատկերացուցէք, որ այս պատմութեան հերոսը՝ Ծաղկաթիթեռը իրականին մէջ կ'ապրի եւ մեզմէ շատ հեռու: Ան ունի հասցէ: Ես այդ հասցէն գիտեմ: Եկէք մտածենք, թէ անոր նամակ գրելու պարագային, ինչի՞ մասին կը գրենք, ի՞նչ կ'ըսենք անոր: Կը քննարկուին երեխաներուն խօսքերը եւ ուսուցիչին օգնութեամբ կը սրբագրուին:*

- *Ծաղկաթիթեռին ես կ'ըսէի, որ ինք շատ հիւրասէր է: Ես շատ կ'ուզէի անոր նման ընկերներ ունենալ:*

- *Ծաղկաթիթեռը բարի է, շնորհալի: Ան կը լսէ իր մօրը:*

Այսօրինակ հարցազրոյցէ մը յետոյ գրատախտակին վրայ կարելի է գրել այն բանալի բառերը, որոնք պէտք կու գան աշակերտներուն (բառերը կը մնան գրատախտակին վրայ): Այդ բառերը կրնան ըլլալ հիւրասէր, տարեդարձ, վառվռուն, կենսուրախ, բարի, օտար շրջան, փշապոչ, ինը տարեկան, օտարին հետ չխօսիլ, հնազանդ, պատուէրներ:

Այս բառերէն օգտուելով, աշակերտները կը ներկայացնեն (2-3 նախադասութիւններով) իրենց նամակին բովանդակութիւնը: Այնուհետեւ ուսուցիչը կը բացատրէ նամակ գրելու կանոնները եւ գրատախտակին վրայ կը գրէ՝

Բարեւ, սիրելի Ծաղկաթիթեւ

Այնուհետեւ աշակերտներուն կը յանձնարարուի 3-5 նախադասութիւններով դիմել Ծաղկաթիթեւին:

*Յիճե՛նՔ. Նամակը ունի եռաբաժան կառոյց.
դիմում հասցէատիրոջը
բուն նիւթը
աւարտը:*

Նամակին ձախ անկիւնը կը գրուի ամիսը, ամսաթիւը, իսկ աջ անկիւնը՝ գրողը պէտք է ստորագրէ, կամ գրէ իր ով ըլլալը:

Կը ներկայացնենք նամակի նմոյշ մը:

*Բարեւ, սիրելի Ծաղկաթիթեւ:
Ծաղկաթիթեւ, ես կը շնորհատրեմ քու տարեդարձը:
Դուն շատ հիւրասէր եւ բարի աղջիկ մըն ես: Ուրախ եմ, որ տարեդարձդ լաւ անցաւ:
Ծաղկաթիթեւ, դուն ծիշդ ըրիր, որ գացիր պարոն*

Փշապոչին հետ: Մօր մը պատուէրները միշտ պէտք է յիշել:

22 Դեկտեմբեր 2013

Նարէ

ՉԱՓՈՐՈՒՄԻՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՁԻ ՀԱՄԱՐ

1. Աշակերտը կրնայ անսխալ կամ չնչին սխալներով կատարել ստեղծագործական ընդօրինակութեան առաջադրանքով նախատեսուած յանձնարարականները:

2. Կրնայ գրել ինքնաթելադրութեամբ նախապէս սորված բանաստեղծութեան երկու քառատողերը (կարճ նախադասութիւններով):

3. Անսխալ կամ չնչին սխալներով կը գրէ 5-6 ուղղագրական արժէք ներկայացնող բառեր պարունակող բնագիրը ուսուցիչին նախապատրաստական աշխատանքէն յետոյ (18-20 բառ):

4. Նախապատրաստական աշխատանքէն յետոյ փոխադրութեամբ կը գրէ (5-7 նախադասութիւն) ծանօթ եւ անծանօթ փոքրիկ պատմութեան բովանդակութիւնը:

5. Նկարաշարին շուրջ իրականացուցած նախապատրաստական աշխատանքէն յետոյ նախ բանաւոր կը պատմէ, ապա համադասարանային կազմած ծրագիրին (փլան) օգնութեամբ կը գրէ կազմած պատմութիւնը:

6. Ուսուցիչին բժախնդիր աշխատանքէն յետոյ կրնայ 2-3 նախադասութենէ կազմուած նամակ գրել կարդացած ստեղծագործութեան հերոսին («Կաղանդ Պապային»), եւայլն:

8. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԷՔՆԵՐՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

• Ծանօթութիւն հայ մարդու արժէքներուն (հիւրասիրութիւն, ծնողամեծարում, երեխայի բարձրարժէքութիւն,

ազգային ասանդոյթներու պահպանում, մայրենի լեզուի եւ կրթութեան բարձր գնահատում, եւայլն):

- Ձեւաւորել եւ զարգացնել ազգային մշակոյթով, ազգային պատմութեամբ հետաքրքրուելու, ուսումնասիրելու, անոնցմով ապրելու, պահպանելու եւ փոխանցելու ձգտում:

- Գիտակցական վերաբերմունք ձեւաւորել ասանդական տօներուն, ծիսակատարութիւններուն, ընտանեկան սովորութիւններուն նկատմամբ:

- Զարգացնել բարեկիրթ գիտակցական վերաբերմունք շրջապատի մարդոց եւ ընկերներու նկատմամբ, հոգատարութիւն հասարակական ունեցուածքի, դպրոցական գոյքի, դպրոցի ունեցուածքի նկատմամբ:


- Հետաքրքրութիւն ձեւաւորել իր երկիրին, հայրենիքին, անոնց պատմութեան եւ աշխարհագրութեան նկատմամբ: Ձեւաւորել երկիրին եւ հայրենիքին մէջ կատարուող դէպքերուն արձագանգելու, պարզ կարծիք ներկայացնելու արձագանգելու ձգտում:

- Դաստիարակել կենդանի եւ անկենդան բնութեան նկատմամբ հոգածութիւն եւ պատասխանատուութիւն, ձեւաւորել բնապահպանական գիտակցութիւն, առողջ ապրելակերպի կանոնները պահպանելու գիտակցութիւն եւ սովորութիւն:

ԶԱՓՈՐՈՇԻԶԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՄԱՐ

1. Աշակերտը ծանօթ է իր ազգային արժէքներուն, կը փորձէ անոնց մասին պարզ դատողութիւններ ընել, կը գնահատէ անոնց արժէքը եւ կը դրսեւորէ համարժէք վարք:

2. Կը հետաքրքրուի ազգային-մշակութային ժառանգութեամբ եւ ձեռքբերումներով, ծանօթ է հայ ժողովուրդի պատմութեան՝ ծրագիրով նախատեսուած դրուագներուն, գիտէ ազգային հերոսներու, մշակոյթի եւ գիտութեան



քանի մը յայտնի դէմքերու անուններ եւ անոնց մասին որոշ դրուագներ:

3. Կը հետաքրքրուի հայրենիքի մէջ եւ իր երկրի մէջ կատարուող իրադարձութիւններով, իրազեկ է որոշ հանրայայտ դէպքերու:

4. Գիտէ եւ կը պահպանէ բնապահպանութեան կանոնները, հոգացաւ է դպրոցին, անոր ունեցուածքին, երկիրին շփումի սահմաններու մէջ առկայ երեւոյթներու նկատմամբ:

5 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

9 ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

15 ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ

1. Ընթերցողական կարողություններ
Ձեռնարկներում եւ ՋԱՐԳԱՅՈՒՄ
2. ԽՕՍՔ, ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ
3. Լեզուի կանխադասումներ
ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ՁԵՌՔԵՐՈՒՄ
4. Գրախոսական ՋԱՐԳԱՅՈՒՄ

37 ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Ընթերցողական կարողություններ
Ձեռնարկներում եւ ՋԱՐԳԱՅՈՒՄ
2. ԽՕՍՔ եւ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ
3. Լեզուի կանխադասումներ
ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՑՈՒՄ
4. ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ
5. Գրախոսական ՋԱՐԳԱՅՈՒՄ
6. ԱԶԳԱՅԻՆ եւ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ
ԱՐԺԷՔՆԵՐՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

63 ԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Ընթերցողական կարողություններ
Ձեռնարկներում եւ ՋԱՐԳԱՅՈՒՄ

- 2. ԽՕՍՔ, ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ
- 3. ԼԵԶՈՒԱԿԱՆ ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՑՈՒՄ
- 4. ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ
- 5. ՁԵՒԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ
- 6. ԳՐԱՒՈՐ ԽՕՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ
- 7. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԷՔՆԵՐՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

95 **ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ**

- 1. ԸՆԹԵՐՑՈՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՁԵՒԱՒՈՐՈՒՄ ԵՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ
- 2. ԽՕՍՔ, ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ
- 3. ԼԵԶՈՒԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՑՈՒՄ
- 4. ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ - ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ
- 5. ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ
- 6. ՁԵՒԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ
- 7. ԳՐԱՒՈՐ ԽՕՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ
- 8. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԷՔՆԵՐՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

“The Armenian Educator”

No. 6 - 2012

“The Armenian Educator”

A tri-monthly journal of education and pedagogy

“The Armenian Educator” (Hay Mangavarj) is devoted to the improvement of education and the professional development of educators in Armenian schools worldwide. The journal, published tri-monthly in Armenian, is a resource for teaching and learning and provides an opportunity for research publication, information about developments of significance to educators, and commentary on issues of concern to the Armenian educational community worldwide.

By the Order of

His Beatitude Nerses Bedros XIX

Catholicos Patriarch of Cilicia of Armenian Catholics

Editor in Chief

Father Vartan Kazanjian

Director

Vartan Tashjian

Board of editors:

Dr. Nazik Haroutyunian (*Professor, Head of Chair of Pedagogy, Yerevan State University*)

Dr. Ashod Melkonian (*Professor, Director of Institute of History, National Academy of Sciences of Armenia*)

Dr. Julieta Gulamirian (*Professor, Senior lecturer, Yerevan State University of Pedagogy*)

Dr. Lilit Arzoumanian (*literary critic*)

Published by

Office of Armenology Curriculum Development

“Saint Krikor Naregatsi” Center

Armenian Catholic Patriarchate

2078-5605 Geitawi Beirut-Lebanon

Tel: + 961 1 570559 - Fax: 961 1 570558

Email: nareg@armeniancatholic.org

www.armeniancatholic.org

Printed in Lebanon - 2014

Pomigravure Printing House



ԴՊՐՈՅԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՄԱՆ ԳՐԱՄԵՆԱԿ